ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք. Երևան «11» 04 2024թ. № 1022-Հ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի N 363-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով.

հ ր ա մ ա յ ու մ ե մ.

1. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի փետրվարի 14-ի «ՊՄԳ ծրագրերի տնտեսական վերլուծության և սոցիալ-տնտեսական ազդեցության գնահատման, ՊՄԳ ծրագրերի նախնական տեխնիկատնտեսական հիմնավորման պատրաստման և ՊՄԳ ծրագրերի պատրաստման փուլի ուղեցույցները հաստատելու մասին» N 363-Ա հրամանում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները՝

1) հրամանի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «ՊՄԳ ծրագրերի տնտեսական վերլուծության և սոցիալ-տնտեսական ազդեցության գնահատման, ՊՄԳ ծրագրերի նախնական տեխնիկատնտեսական հիմնավորման պատրաստման, ՊՄԳ ծրագրերի պատրաստման փուլի, ՊՄԳ պայմանագրի կառավարման, ՊՄԳ շրջանակներում շուկայի հետ նախնական հաղորդակցման, ՊՄԳ շրջանակներում մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգի, ՊՄԳ ծրագրի՝ գնահատման ուղեցույց փաստացի արդյունքների ուղեցույցները հաստատելու մասին».

2) հրամանի 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ ենթակետերով.

«4) ՊՄԳ պայմանագրի կառավարման ուղեցույցը՝ համաձայն 4-րդ հավելվածի.

5) ՊՄԳ շրջանակներում շուկայի հետ նախնական հաղորդակցման ուղեցույցը՝ համաձայն 5-րդ հավելվածի.

6) ՊՄԳ շրջանակներում մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգի ուղեցույցը՝ համաձայն 6-րդ հավելվածի.

7) ՊՄԳ ծրագրի՝ փաստացի արդյունքների գնահատման ուղեցույցը՝ համաձայն 7-րդ հավելվածի»:

2. Հրամանը լրացնել նոր N 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ հավելվածներով՝ համաձայն N 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հավելվածների:

Recoverable Signature

X

Signed by: GEVORG PAPOYAN 2102870448

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2024
թվականի ապրիլի 11-ի N 1022-Ա
հրամանի

«Հավելված N 4
ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2023
թվականի փետրվարի 14-ի N 363-Ա
հրամանի

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՊՄԳ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

Բովանդակություն

Սահմանումներ 3

ՊՄԳ պայմանագրի ապահովման միջոցները, դրանց տեսակները և կիրառելիությունը 4

Ծրագրի կատարողականի ապահովումներ 5

Հայտի ապահովումների ձևեր 6

Կատարողականի ապահովումներ և դրանց գումարներ 7

ՊՄԳ պայմանագրի կառավարման ձեռնարկի մշակումը 9

ՊՄԳ ծրագրի վերաբերյալ մասնավոր գործընկերոջ և հանրային գործընկերոջ հաշվետվությունների ներկայացման սկզբունքները և պահանջները 13

ՊՄԳ պայմանագրի հաշվետվողականության շրջանակներում հանրային գործընկերոջ պարտավորությունների շրջանակը 13

ՊՄԳ պայմանագրի հաշվետվողականության շրջանակներում մասնավոր գործընկերոջ պարտավորությունների շրջանակը 13

ՊՄԳ պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում մշտադիտարկման ֆոկուսը 15

Պայմանագրի՝ ուժի մեջ մտնելու նախապայմանների իրականացման փուլ 22

Մինչշինարարական փուլ 23

Կառուցման փուլ 27

Շահագործման հանձնում 38

Սահմանումներ

Լիազոր մարմին	Համաձայն ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 28-ի թիվ 1183-Ն որոշման
Իրավասու մարմին	Համաձայն 2019 թվականի հունիսի 28-ին ընդունված «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» ՀՀ օրենքի
Որոշում	ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 28-ի թիվ 1183-Ն որոշում
Բանկային/Ապահովագրական երաշխիք	Բանկի կամ ապահովագրական ընկերության կողմից թողարկված երաշխիքներն ունեն նույնանման գործառույթ: Դրանք կատարողականի ապահովում են՝ Կատարողականի երաշխիքի ձևով:
Օրենք	2019 թվականի հունիսի 28-ին ընդունված «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» ՀՀ օրենք
ՇևՊ	Շահագործում և պահպանում
Կատարողականի երաշխիք	Կատարողականի երաշխիքը պայմանագրի կողմերից մեկին տրամադրվող ֆինանսական երաշխիք է՝ պայմանագրի մյուս կողմի պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով: Այն նաև կոչվում է պայմանագրի երաշխիք:
Կատարողականի ապահովում	Ներառում է պահուստային փաստաթղթային ակրեդիտիվ, բանկային/ապահովագրական երաշխիք և կատարողականի երաշխիք: Նշված փաստաթղթերը կազմվում են մասնավոր գործընկերոջ և ապահովումը տրամադրող ֆինանսական հաստատության միջև պայմանագրի ձևով: Հանրային գործընկերը հանդիսանում է ապահովման շահառուն:

Մասնավոր գործընկեր	Համաձայն 2019 թվականի հունիսի 28-ին ընդունված «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» ՀՀ օրենքի
ՊՄԳ	Պետություն-մասնավոր գործընկերություն
Հանրային գործընկեր	Համաձայն 2019 թվականի հունիսի 28-ին ընդունված «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» ՀՀ օրենքի
Պահուստային փաստաթղթային ակրեդիտիվ	Պահուստային փաստաթղթային ակրեդիտիվը բանկի կամ որոշակի ֆինանսական հաստատության կողմից թողարկված իրավական փաստաթուղթ է, որով երաշխավորվում է սահմանված ժամկետում վճարում կատարելու բանկի/հաստատության պարտավորությունը՝ գնորդի կողմից պայմանագրային պարտավորության չկատարման դեպքում:

ՊՄԳ պայմանագրի ապահովման միջոցները, դրանց տեսակները և կիրառելիությունը

1. Ուղեցույցում ներկայացվում են կատարողականի ապահովման պահանջներին վերաբերող ստանդարտ պրակտիկաները և պայմանագրի պատշաճ կատարման համար շուկայում առկա ապահովումների տեսակները:

2. Կատարողականի ապահովումները շուկայում լայնորեն հասանելի են, իսկ պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով մասնավոր գործընկերներին դրանց տրամադրման պրակտիկաները լավ հայտնի են ենթակառուցվածքային և շինարարության ոլորտներում:

3. Կատարողականի երաշխիքի շահառուն հանրային գործընկերն է: Մասնավոր գործընկերոջ կողմից պայմանագրային պարտավորությունների չկատարման դեպքում հանրային գործընկերը հասանելիություն է ստանում երաշխիքի միջոցներին՝ պարտավորությունների չկատարման հետևանքների շտկման նպատակով:

4. Պահուստային փաստաթղթային ակրեդիտիվը սովորաբար կիրառվում է երկարաժամկետ պայմանագրերի դեպքում՝ շահառուին պայմանագրի պայմաններին համապատասխան վճարման ապահովում տրամադրելու նպատակով:

5. Բանկային/ապահովագրական երաշխիքի միջոցով տրամադրվում է համեմատաբար ավելի լայն շրջանակ ունեցող ապահովում, քանի որ այն կիրառվում է և՛ երկարաժամկետ, և՛ կարճաժամկետ գործարքների դեպքում, օրինակ՝ կառուցապատման ծրագրերում կատարողականի երաշխավորման նպատակով:

6. Կատարողականի երաշխիքը տրամադրվում է բանկի կամ ապահովագրական ընկերության կողմից՝ ապահովելու համար սահմանված ծրագրերի և գործողությունների իրականացումը կապալառուի կողմից, և հասանելի է հանրային գործընկերոջը որպես միջոցների աղբյուր՝ ըստ անհրաժեշտության ուղղիչ գործողությունների իրականացման համար:

Ծրագրի կատարողականի ապահովումներ

7. ՊՄԳ պայմանագրերի դեպքում ապահովումների կիրառումը առավել բարդ է, քան ստանդարտ գնումների ընթացակարգի պարագայում: Մասնավոր գործընկերոջ կողմից ծրագրի հայտի պահանջներին համապատասխանությունը և ՊՄԳ պայմանագրով սահմանվող պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով պահանջվում են հետևյալ ապահովումները՝

8. Հայտի ապահովում. այս ապահովումը պարտավորություններ է առաջացնում հայտատուի համար՝ հաղթող ճանաչվելու դեպքում իր հայտը վավեր պահելու մասով: Ապահովումը տրամադրվում է՝ փոխհատուցելու համար կառավարության բոլոր այն ծախսերը, որոնք առաջանում են, եթե հայտատուն հաղթող ճանաչվելուց հետո հետ է կանչում հայտը կամ չի կատարում գործարքի առևտրային կայացման համար սահմանված պահանջները, ինչի հետևանքով հանրային գործընկերը կրում է ծախսեր:

1) Պայմանագրի կատարողականի երաշխիքներ կարող են պահանջվել ՊՄԳ պայմանագրի մի շարք փուլերում: Ստորև բերված գծապատկերում ներկայացվում են ՊՄԳ պայմանագրի այն մասերը, որտեղ սովորաբար պահանջվում են ապահովումներ, ինչպես նաև ապահովման առարկա հանդիսացող հարցերը՝ ռիսկերը:

Գործարքի ֆինանսական կայացում	• Մասնավոր գործընկերոջ կողմից գործարքի ֆինանսական կայացման ապահովում • Ռիսկերը ներառում են. ֆինանսավորման չապահովում, ֆինանսավորման ապահովման ուշացում, ելք ՊՄԳ պայմանագրից
Շինարարության կատարողական	• Նախագծման և շինարարության մասով պայմանագրային պահանջներին համապատասխանության ապահովում • Ռիսկերը ներառում են. պահանջներին նախագծի անհամապատասխանություն, նախագծման կամ շինարարական աշխատանքների ավարտի ուշացում, աշխատանքների ստուգմամբ անբավարար արդյունքների արձանագրում, պայմանագրի շրջանակներում հանրային գործընկերոջ ցուցումների չկատարում
Շահագործում և պահպանում	• ՊՄԳ պայմանագրով նախատեսված օբյեկտի շահագործման և պահպանման մասով պայմանագրային պահանջների կատարման ապահովում՝ հիմնված կառուցապատման կամ ծառայությունների վրա • Ռիսկերը ներառում են. կատարողականի նվազագույն ստանդարտներին համապատասխան պահպանման չկատարումը՝ ֆիզիկական ենթակառուցվածքների կամ ծառայությունների վրա հիմնված պայմանագրերի դեպքում: Կառավարության ծախսերի ծածկում՝ միջամտության և նոր մասնավոր գործընկերոջ նշանակման դեպքում:
Պայմանագրի ավարտ	• Ծառայությունների վրա հիմնված պայմանագրի դեպքում ենթակառուցվածքների կամ սարքավորումների/շենքերի/գույքի վիճակի մասով պայմանագրի պայմանների կատարման ապահովում • Ռիսկերը ներառում են. ՊՄԳ պայմանագրով սահմանված վիճակում ենթակառուցվածքային օբյեկտը կամ սարքավորումները/շենքերը/գույքը չհանձնելը

9. Ի լրումն վերը բերված հարցերի, եթե ՊՄԳ պայմանագրով սահմանվում են մասնավոր գործընկերոջ կողմից կատարման ենթակա՝ պայմանագրի ուժի մեջ մտնելու նախապայմաններ, և վերջիններս բարդ և էական են, ապա այդպիսի նախապայմանների կատարման մասով ևս կարող է պահանջվել ապահովում: Սովորաբար, նշված՝ պայմանագրի ուժի մեջ մտնելու նախապայմանների մասով սահմանվում է, որ դրանք պետք է կատարվեն մինչև գործարքի ֆինանսական կայացումը և կարող են ներառել որոշակի ռեսուրսների և դրանց հետ կապված պայմանագրերի առկայության պահանջներ՝ ծրագրի մեկնարկի համար:

Հայտի ապահովումների ձևեր

10. Հայտի ապահովումները կարող են լինել ֆինանսական հաստատության կողմից տրված պահուստային փաստաթղթային ակրեդիտիվի, ֆինանսական հաստատության կողմից տրված երաշխիքի կամ ապահովագրական հաստատության կողմից թողարկված ապահովագրական պայմանագրի ձևով: Ապահովման ձևը, բովանդակությունը և դրանով ծածկվող ռիսկերը սահմանվում են ՊՄԳ պայմանագրով և առաջարկի հարցմամբ (ծրագրի հայտերի ապահովումների համար): Կոնկրետ ձևի ընտրության մասով հիմնավոր փաստարկներ առկա չեն: Սովորաբար, առաջարկի հարցմամբ և ՊՄԳ պայմանագրով սահմանվում է, որ նշված երեք ապահովումներից յուրաքանչյուրն ընդունելի է, սակայն ապահովումը պետք է

տրված լինի միջազգայնորեն ճանաչված և գրանցված/լիցենզավորված ֆինանսական հաստատության կողմից:

Կատարողականի ապահովումներ և դրանց գումարներ

11. Ապահովման գումարները տարբեր են՝ կախված նրանից, թե գործարքի շրջանակներում դրանցով ինչ է ապահովվում: Ստորև բերված աղյուսակում ներկայացվում են դիտարկման ենթակա գումարները:

Աղյուսակ 1 Ապահովման տեսակները և դրանց գումարի կողմնորոշիչները

Ապահովման նպատակ	**Գումարի հաշվարկ**
Հայտի ապահովում	Բավարար է ծրագրի կրկնակի մրցույթի անցկացման մասով պետության ծախսերի ծածկման համար, բայց ոչ պակաս քան ՊՄԳ ծրագրի իրականացման համար անհրաժեշտ կապիտալ ծախսերի գնահատված արժեքի 2 (երկու) տոկոսը: Գումարը սահմանվում է «մեկ ծրագրի հաշվով» սկզբունքով:
Գործարքի ֆինանսական կայացման կատարողականի ապահովում	Բավարար է գործարքի առևտրային կայացմանը հասնելու, գործող պայմանագրի հասնելու և ծրագրի կրկնակի մրցույթ անցկացնելու անհրաժեշտության մասով պետության ծախսերի ծածկման համար:
Շինարարության կատարողականի ապահովում	Սովորաբար կազմում է շինարարության պայմանագրի՝ հայտով ներկայացված արժեքի 1-3 տոկոսը: Շինարարական աշխատանքների բարդությունը սովորաբար ավելացնում է ապահովման գումարը: Այս կատարողականի երաշխիքի համար սովորաբար պահանջվում է «համալրման» հնարավորություն, եթե դրա միջոցների մի մասն օգտագործվել է: Սովորաբար համալրումը կատարվում է, երբ ապահովման գումարի մնացորդը հասնում է դրա սկզբնական գումարի 50 տոկոսին, իսկ համալրումը կատարվում է

Ապահովման նպատակ	Գումարի հաշվարկ
	ապահովման գումարն իր սկզբնական չափին վերադարձնելու համար: Ծրագրի փուլերով իրականացման դեպքում, ՊՄԳ պայմանագրով կսահմանվեն յուրաքանչյուր փուլի մասով ապահովման պահանջները: Վերը նշված արժեքի տոկոսը կմնա անփոփոխ:
Շահագործման և պահպանման կատարողականի ապահովում	Շինարարության կատարողականի ապահովման նմանությամբ, այս ապահովման գումարը կազմում է շահագործման և պահպանման տարեկան ծախսերի 1-3 տոկոսը: Այս ապահովման մասով պահանջվում է համալրման գործադրում, երբ ապահովման գումարի մնացորդը հասնում է դրա սկզբնական գումարի 50 տոկոսին: Ապահովումը սովորաբար ճշգրտվելու է՝ սպառողական գների ինդեքսը հաշվի առնելու նպատակով, քանի որ շահագործման և պահպանման ծախսերն աճում են ՊՄԳ պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում:
Պայմանագրի ավարտի կատարողականի ապահովում	Այս ապահովման գումարի մասով կիրառվում են նույն տոկոսներն, ինչ շինարարության ու շահագործման և պահպանման ապահովումների պարագայում: Հաշվարկը հիմնվում է հետևյալ երեք քայլերի վրա. Պայմանագրի ավարտից մինչև 2 տարի առաջ իրականացվող ստուգում: Ստուգման միջոցով որոշվում է գույքի՝ պայմանագրով սահմանված և փաստացի վիճակի միջև տարբերությունը: Հաշվարկվում են նշված տարբերության մասով ծախսերը և հանրային ու մասնավոր գործընկերների միջև մշակվում և համաձայնեցվում է աշխատանքային ծրագիր:

Ապահովման նպատակ	Գումարի հաշվարկ
	Այնուհետև սահմանվում է կատարողականի ապահովում՝ 2-րդ կետում հաշվարկված ծախսերի 1-3 տոկոսի չափով: Այս կատարողականի ապահովման մասով ևս պահանջվում է համալրման գործադրում, երբ ապահովման գումարի մնացորդը հասնում է դրա սկզբնական գումարի 50 տոկոսին:

ՊՄԳ պայմանագրի կառավարման ձեռնարկի մշակումը

12. Պայմանագրի կառավարման ձեռնարկը հանդիսանում է ճանապարհային քարտեզ, թե ինչպես արդյունավետ կառավարել ՊՄԳ պայմանագիրը հանրային գործընկերոջ և պետական այլ մարմինների բոլոր այն աշխատակիցների համար, ովքեր ուղղակիորեն կամ անուղղակիորեն ներգրավված կլինեն տվյալ պայմանագրի կառավարման և մշտադիտարկման գործընթացներում: Ակնհայտ է, որ ձեռնարկը չպետք է փոխարինի պայմանագիրը, իր դերը օժանդակող է:

13. Պայմանագրի կառավարման ձեռնարկը պետք է հստակ և մատչելի կերպով, հնարավորինս խուսափելով իրավական տերմիններից, ներկայացնի թե ինչ է ակնկալվում հանրային գործընկերոջից, որպեսզի

1) կատարի իր պարտավորությունները մասնավոր գործընկերոջ հանդեպ, և

2) ստանձնի իր պարտականությունները՝ ՊՄԳ պայմանագրին կառավարելու և մշտադիտարկելու առումով: Ձեռնարկը պետք է ապահովի հանրային գործընկերոջ և մշտադիտարկող խմբի համար կազմակերպչական պայմանավորվածությունները պլանավորելու և սահմանելու միջոցներ: Այս տեսակ ներքին հարցերը սովորաբար չեն արտացոլվում ՊՄԳ պայմանագրում, քանի որ այդ տեղեկատվությունը նպատակահարմար չէ տրամադրել մասնավոր գործընկերոջը և այդ կառուցակարգերը պետք է ճկուն լինեն Հանրային գործընկերոջ համար:

14. Ձեռնարկը չի փոխարինում ՊՄԳ պայմանագրին, այն պարունակում է հղումներ պայմանագրային փաստաթղթերի դրույթներին, անհրաժեշտության դեպքում ավելի մանրամասն տեղեկատվության կամ իրավական հիմքի հասանելիությունն ապահովելով:

15. Ձեռնարկը վերաբերում է Կառավարության և (կամ) հանրային գործընկերոջ ներքին ընթացակարգերին, որոնք ներառում են վարչակազմի տարբեր ստորաբաժանումների՝ ՊՄԳ պայմանագրի կառավարման և մշտադիտարկման առնչությամբ պարտավորությունները: Այն դեպքերում, եթե ՊՄԳ ծրագիրը առնչվում է մի քանի հանրային շահագրգիռ կողմերի (օրինակ՝ դպրոցներ, հիվանդանոցներ), ձեռնարկի շրջանակը կարող է ընդլայնվել, որպեսզի արտացոլի շահագրգիռ կողմերի դերակատարների միջև փոխգործակցությունը և հաղորդակցությունը:

16. Ձեռնարկը հնարավորություն է տալիս սահմանել գործառնական կառավարման ռազմավարությունը և այն հաստատել որոշումների կայացման շղթայի համապատասխան մակարդակներում: Մասնավորապես, նման ռազմավարությունը նպատակաուղղված կլինի ծրագրի խոշոր ռիսկերին, որոնք հանրային գործընկերը պետք է առաջնայնորեն կառավարի: Այդ իսկ պատճառով, փաստաթուղթը մշակելիս իրավասու մարմինը մշտադիտարկող խմբի և լիազոր մարմնի աջակցությամբ պետք է ուշադրություն դարձնի ծրագրի հիմնական ռիսկերի դուրս բերմանը և երաշխավորի, որ ձեռնարկը տրամադրի բոլոր անհրաժեշտ գործիքներն ու գործընթացները՝ այդ ռիսկերը մեղմելու համար:

17. Ռեսուրսների ամրագրում. Պայմանագրի կառավարման ձեռնարկը պետք է հնարավորություն տա հանրային գործընկերոջ ղեկավարին բացահայտել անհրաժեշտ գործողությունները կատարելու համար պահանջվող ռեսուրսները և դրան համապատասխան իրականացնել էական և նյութապես կարևոր ռիսկերի կառավարում ՊՄԳ ծրագրի տարբեր փուլերում:

18. Պայմանագրի կառավարման ձեռնարկը պետք է հստակ նկարագրի հաղորդակցման, հաշվետվողականության և որոշումների կայացման գործընթացները և նպաստի դրանց արտացոլմանը՝ ՊՄԳ ծրագրում ներգրավված պետական մարմինների գործընթացներում: Ձեռնարկի մշակումը պետք է նպաստի տեղեկատվության փոխանակմանը՝ ՊՄԳ ծրագրի նախագծի պատրաստման և մասնավոր գործընկերոջ ընտրության գործընթացի համար պատասխանատու և պայմանագրի ստորագրմանը հաջորդող փուլերում ներգրավված անձանց միջև:

19. Պայմանագրի կառավարման ձեռնարկը պետք է լինի դինամիկ փաստաթուղթ և պարբերաբար թարմացվի՝ ապահովելու համար, որ այն արդիական է ՊՄԳ ծրագրի տարբեր փուլերի ընթացքում: Այդ թվում պետք է արտացոլվեն պայմանագրի հնարավոր փոփոխությունները, օրենսդրական դաշտի փոփոխությունները,

կառավարության կամ հանրային գործընկերոջ կառուցվածքային փոփոխությունները և այլն:

20. Ձեռնարկի որոշ հատվածներ, հատկապես նրանք, որոնք վերաբերում են հանրային գործընկերոջ և մասնավոր գործընկերոջ միջև փոխգործակցությանը (օրինակ՝ տվյալների հավաքագրում, կատարողականի չափում, հաշիվների և վճարումների վավերացման գործընթաց), կարող են տրամադրվել մասնավոր գործընկերոջը՝ հետադարձ կապ ստանալու և ապահովելու համար, որ իր կողմից կմշակվեն և կներդրվեն անհրաժեշտ համապատասխան ներքին ընթացակարգերը:

21. Ձեռնարկը կծառայի որպես տեղեկատու փաստաթուղթ պայմանագրի ողջ ընթացքում՝ հեշտացնելով ցանկացած հանձնում, որը կարող է պահանջվել կառավարման թիմի տարբեր անդամների միջև: Այն պետք է լինի ծանոթացման համար պարտադիր՝ ՊՄԳ պայմանագրի մշտադիտարկմանը և կառավարմանը մասնակցող անձանց համար:

22. Պայմանագրի կառավարման ձեռնարկը պետք է լինի հնարավորինս հակիրճ և մոդուլային: Կառուցվածքային առումով այն պետք է համատեղի թեմատիկ մոտեցումը (օրինակ՝ հանրային գործընկերոջ թիմը, վճարումների կառավարումը) ժամանակագրականի հետ՝ արտացոլելով հիմնական ամսաթվերը և գործողությունների վերջնաժամկետները:

23. Ընթացակարգերը և պատասխանատուներին նկարագրելու համար կարող է նախընտրելի լինել գծապատկերների օգտագործումը: Որոշ ստանդարտ ձևեր և/կամ փաստաթղթերի ձևանմուշները կարող են պատրաստվել և կցվել որպես հավելված:

24. Ստորև ներկայացված է ձեռնարկի հնարավոր կառուցվածքը.

1) Ներածություն

   Փաստաթղթի նպատակը
   Ծրագրի/պայմանագրի նախապատմությունը (ծագումը, առևտրային կառուցվածքը և նպատակները)
   Մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգի հիմնական ասպեկտները

2) Կառավարում

   Խորհուրդներ և հանձնաժողովներ
   Հաղորդակցման և տեղեկատվական գործընթացներ

Որոշումների ընդունման գործընթացները
Պատվիրակված լիազորություններ
Շահակիցների կառավարում (ներառյալ վերջնական սպառողները)

3) Մշտադիտարկող թիմի կառուցվածքը

Կազմակերպչական կառուցվածք
Դերերն ու պարտականությունները
Հիմնական կոնտակտներ

4) Մասնավոր գործընկերոջ թիմի կառուցվածքը

Կազմակերպչական կառուցվածք
Դերերն ու պարտականությունները
Հիմնական կոնտակտներ

5) Շահագործման փուլի կառավարում

Հանդիպումներ (տեսակը, նպատակը, հաճախականությունը, արդյունքները)
Կատարողական նվազագույն ստանդարտները և ցուցանիշները, գործունեության թիրախներ
Տվյալների հավաքագրում, վավերացում և գրանցում
Հաշվետվողականություն
Ռիսկերի կառավարման գործընթաց
Վճարման մեխանիզմ և գործընթաց, ներառյալ բյուջետային և հաշվապահական ասպեկտները
Ձեռնարկի վերանայումներ և փոփոխություններ
Փոփոխությունների կառավարում
Վեճերի լուծում

ՊՄԳ ծրագրի վերաբերյալ մասնավոր գործընկերոջ և հանրային գործընկերոջ հաշվետվությունների ներկայացման սկզբունքները և պահանջները

ՊՄԳ պայմանագրի հաշվետվողականության շրջանակներում հանրային գործընկերոջ պարտավորությունների շրջանակը

25. Պայմանագրերի կառավարման մասով հանրային գործընկերոջ դերն է՝ պայմանագրերի ուսումնասիրության, կատարման, մշտադիտարկման, գնահատման և թարմացման կառավարումը՝ միտված ռիսկերի նվազեցմանը և առավելագույն կատարողական արդյունքների:

26. Պայմանագրի ողջ ընթացքում վերջինիս կառավարումը առանցքային նշանակություն ունի ՊՄԳ պայմանագրերի հաջողության համար, իսկ պարտադիր ուժ ունեցող պայմանագրի դրույթներով սահմանվում են շահառուների հարաբերությունները, գնագոյացման կառուցվածքները, աշխատանքների ծավալները, իրավունքներն ու պարտավորությունները, ծրագրերի ժամանակացույցերը, տրամադրվող ապահովումները և այլն: Հաշվի առնելով պայմանագրերի առանցքային նշանակությունը, հաշվետվության մասով հանրային գործընկերոջ դերը կարևորագույն նշանակություն ունի պայմանագրերի արդյունավետ կառավարման հարցում, որը բարելավում է ՊՄԳ պայմանագրերի կատարողականը:

ՊՄԳ պայմանագրի հաշվետվողականության շրջանակներում մասնավոր գործընկերոջ պարտավորությունների շրջանակը

27. Մասնավոր գործընկերը պատասխանատու է ՊՄԳ պայմանագրում մանրամասն սահմանված կատարողականի նվազագույն ստանդարտների և ցուցանիշների, ինչպես նաև պայմանագրի կնքումից հետո ձևավորված տարբեր հանձնաժողովների նիստերի ընթացքում հատուկ սահմանված և համաձայնեցված ԿՀՑ-ների (KPI) հետ համապատասխանության վերաբերյալ առաջընթացի հաշվետվությունների պատրաստման համար:

28. Կանոնավոր հաճախականությամբ հանդիպումներ Կառավարող և Մշտադիտարկող խմբերի գործընկերների հետ՝ քննարկելու նախագծումը, շինարարական աշխատանքները, շահագործման հանձնումը, շահագործումը և

ակտիվի հետ փոխանցումը կառավարությանը: Հանդիպումների ժամանակացույցը և հանձնաժողովների կազմերը հիմնականում սահմանվում են ՊՄԳ պայմանագրում:

29. Ֆինանսական հաշվետվությունների պարբերական ներկայացում հանրային գործընկերոջը՝ համաձայն ՊՄԳ պայմանագրի: Ֆինանսական հաշվետվությունները պետք է առնվազն ներառեն ընկերության հաշվապահական հաշվեկշիռը, եկամուտների և ծախսերի մասին հաշվետվությունը, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը և ծանոթագրություններ՝ համաձայն ՖՀՄՍ-ի: Սովորաբար, ՊՄԳ պայմանագրով սահմանվում է, որ ընկերությունը պետք է արտաքին աուդիտորներից ստանա դրական եզրակացություն:

30. Ապագա գործառնությունների, ծախսերի, կապիտալ ծախսերի, եկամուտների և ֆինանսավորման վերաբերյալ կանխատեսումների պարբերական ներկայացում՝ համաձայն ՊՄԳ պայմանագրի:

31. Մասնավոր գործընկերը պետք է պարբերաբար տեղեկատվություն ներկայացնի վարկային պարտավորությունների կատարման վերաբերյալ, ինչպես նաև կառավարող կամ մշտադիտարկող խմբին տեղեկացնի իր կողմից ցանկացած պարտավորության չկատարման հնարավորության մասին և ներկայացնի վարկային պայմանագրի իրական կամ հնարավոր խախտման հասցեագրման ուղղությամբ ձեռնարկվելիք բոլոր մեղմացուցիչ միջոցառումները:

32. Գործնականում հնարավորություն առաջանալուն պես, հանրային գործընկերոջը և լիազոր մարմնին հաշվետվության ներկայացում հետևյալի վերաբերյալ.

1) Ծրագրի գործառնությունների վրա ազդող անհաղթահարելի ուժի ցանկացած իրավիճակ,

2) Իրականացված կամ իրականացվելիք փաստացի կամ պլանավորված մեղմացուցիչ միջոցառումներ՝ անհաղթահարելի ուժի իրավիճակի ստեղծումից հետո օբյեկտն անմիջապես շահագործման վերադարձնելու և ենթակառուցվածքային ծառայությունները մատուցելու նպատակով,

3) Բանկային պարտավորությունների ցանկացած խախտում՝ առանց բացառության,

4) Պարտավորությունների խախտման արդյունքում բանկից կամ բանկերից ստացված արձագանք,

5) Սեփական կապիտալի բաժանորդների կողմից իրենց բաժանորդագրման պարտավորությունների ցանկացած չկատարում,

6) Ծրագրի ընկերության ցանկացած առանցքային բաժնետիրոջ ֆինանսական պարտավորության չկատարման, սնանկության կամ անվճարունակության բոլոր դեպքերը,

7) Պայմանագրի առաջարկվող ցանկացած փոփոխություն:

33. Տեխնիկական պայմանների մշտադիտարկում և տեխնիկական սթրես թեստերի իրականացում՝ ՊՄԳ պայմանագրով սահմանված պայմանների և նպատակների հետ շինարարության և գործառնությունների տեխնիկական բաղադրիչների համապատասխանությունն ապահովելու նպատակով: Տեխնիկական սթրես թեստի արդյունքների ներկայացում կառավարող և մշտադիտարկող խմբերին:

34. Մասնավոր և հանրային գործընկերների միջև երբեմն համաձայնեցվող ցանկացած այլ տեղեկատվության տրամադրում:

ՊՄԳ պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում մշտադիտարկման ֆոկուսը

35. Պայմանագրում կատարողականի և հաշվետվության մասով առանձին պահանջների հետ մեկտեղ, ՊՄԳ պայմանագիրը սովորաբար ներառում է տարբեր ապահովումներ: Չնայած բոլոր կողմերը կարող են տեղյակ լինել կամ ընկալում ունենալ կատարողականի և հաշվետվության մասով նշված պահանջների մասին, այդ բաղադրիչներին հետևելը կենսական նշանակություն ունի հանրային գործընկերոջ հաշվետվության գործընթացի հետ կապված աշխատանքների համար: Մասնավոր գործընկերը պետք է ժամանակին պատրաստի և հանրային գործընկերոջը, կառավարող և մշտադիտարկող խմբերին փոխանցի տարբեր հաշվետվություններ: Բոլոր մարմինները պետք է համաձայնության հասնեն ծրագրի յուրաքանչյուր փուլում պլանավորված իրադարձությունների ժամկետների վերաբերյալ:

36. Պայմանագրի յուրաքանչյուր փուլի համար հաշվետվության մանրամասն ժամանակացույցի սահմանումից հետո, մասնավոր գործընկերը պետք է համատեղ աշխատի նոր ստեղծված կառավարող խմբի հետ՝ պայմանագրով պահանջվող հաշվետվության հետ կապված գործողությունները քննարկելու և պլանավորելու նպատակով: Առաջացող հարցերը քննարկվում և համաձայնեցվում են հանրային գործընկերոջ հետ:

37. Մասնավոր գործընկերոջից պահանջվող հաշվետվություններն ընդհանուր առմամբ ներառում են.

1) ՊՄԳ պայմանագրով սահմանված ծրագրի ուղենիշների կամ ժամկետների և այլ պարտավորությունների մասով արձանագրված ձեռքբերումների վերաբերյալ հաշվետվություններ,
2) Հաշվետվության ընթացակարգերի պահպանման վերաբերյալ հաշվետվություն,
3) Կատարողական ստանդարտների համեմատ ՊՄԳ ծրագրի կատարողականի գնահատում,
4) Առաջացող լրացուցիչ ռիսկեր, որը ներառում է. (i) այն գործոնները, որոնք կարող են բարձրացնել ռիսկերից յուրաքանչյուրի մակարդակը (հավանականությունը և ազդեցությունը); (ii) ամենահավանական ռիսկերի մեղմման հնարավորության հաստատում, (iii) ռիսկի մեղմման ուղղությամբ ձեռնարկված հնարավոր քայլերի վերհանում, (iv) ծրագրի ռիսկային դառնալու պարագայում՝ հստակ սահմանված ռիսկերի կառավարման գործընթացի ապահովում:

38. ՊՄԳ պայմանագրի տարբեր փուլերը (մանրամասն նկարագրված են Հավելված 4.1-ում) պետք է ներառեն.

1) Պայմանագրի՝ ուժի մեջ մտնելու նախապայմանների իրականացման փուլ. ՊՄԳ պայմանագրերի մեծամասնության ներքո, պայմանագիրն ուժի մեջ չի մտնում մինչև մի շարք իրադարձությունների տեղի ունենալը: Սովորաբար, նշված իրադարձությունները ներառում են վարկատուների և մասնավոր գործընկերոջ միջև վարկային համաձայնագրի ստորագրումը, ինչպես նաև ՊՄԳ ծրագրի բոլոր ներդրողների կամ բաժնետերերի կողմից բոլոր Բաժանորդագրման համաձայնագրերի ստորագրումը: Ավելին, ծրագրի շրջանակներում օգտագործվող բոլոր հողամասերի ապահովումը և իրավասու մարմնի կողմից սերվիտուտի ձեռքբերումն առանցքային նշանակություն ունի պայմանագրի արդյունավետության համար

2) Մինչշինարարական կամ նախագծման փուլ. այս փուլը ներառում է ծրագրի նախագծումը, վերջնական հաստատումների ստացումը և սերվիտուտի ու հողերի ձեռքբերման համար վճարումները, ինչպես նաև շինարարական աշխատանքների մոբիլիզացիայի ժամանակացույցի կազմումը: Այս փուլում, մասնավոր գործընկերը պետք է հաշվետվություն և խորհրդատվություն

իրականացնի Մանրամասն ինժեներական նախագծի (ՄԻՆ) վերաբերյալ: Մասնավոր գործընկերը պետք է հանդիպի և պատասխանի կառավարող խմբի հարցումներին, ինչպես նաև համագործակցի ուշ փուլի ուշացումները վերացնելու համար՝ հաստատման գործընթացում սահմանափակ ներգրավվածություն ունենալու նպատակով: Կառավարող խումբը պետք է ուսումնասիրի և հաստատի ՄԻՆ-ը, ինչպես նաև ակտիվ դեր ստանձնի ապահովելու, որ նախագծի փորձաքննությունները և հաստատումները ձեռք են բերվում առանց ուշացումների:

3) Կառուցման փուլ. այս փուլը մեկնարկում է մասնավոր գործընկերոջ կողմից շինարարական խմբի ներգրավմամբ և տևում է մինչև ծրագրի շահագործման հանձնման փուլը:

4) Շահագործման հանձնման փուլ. այս փուլը մեկնարկում է շինարարական աշխատանքների ավարտին մոտ: Նախքան օբյեկտի շահագործման մեկնարկը, պետք է ստուգվի և ապացուցվի ՊՄԳ պայմանագրին համապատասխան դրա աշխատելու կարողությունը:

5) Շահագործման փուլ. այս փուլը ներառում է ընթացիկ շահագործման և պահպանման մշտադիտարկում՝ օբյեկտի շահագործման հանձնումից հետո:

6) Փոխանցման կամ հանձնման փուլ. այս փուլը սովորաբար համընկնում է Շահագործման փուլի վերջին հատվածի հետ և մեկնարկում է պայմանագրի դադարեցումից մոտ երկու տարի առաջ: Սակայն, նախքան պայմանագրի գործողության ժամկետի լրանալը դրա դադարեցման դեպքում, անհրաժեշտ կլինի իրականացնել հավելյալ և ծախսատար միջոցառումներ: Այս փուլում հիմնական շեշտը դրվում է օբյեկտի և դրա հետ կապված ակտիվների գույքագրման վրա, որպեսզի ապահովվի գույքի հետհանձնումը և դրա վիճակի որոշումը, ինչպես նաև վերականգնողական միջոցառումների համար պատասխանատվության պատշաճ վերապահումը:

39. Հավելված 4.1-ում ներկայացվում է ՊՄԳ ծրագրի յուրաքանչյուր փուլում մասնավոր և հանրային գործընկերների կողմից ներկայացվող հաշվետվությունների բովանդակությունը և դրան համապատասխան մշտադիտարկման առանցքային հարցերը:

40. Հանրային գործընկերը Հավելված 4.1 ծրագրի փաստացի փուլին համապատասխանող աղյուսակի աջ սյունակում ներկայացված սկզբունքներին և

բովանդակությանը համապատասխանող հաշվետվությունները առնվազն կիսամյակային պարբերականությամբ ներկայացնում է ՊՄԳ ստորաբաժանմանը: Հաշվետվությունների պատրաստման համար Հանրային գործընկերը ներգրավում է Կառավարող և Մշտադիտարկող խմբերին:

41. ՊՄԳ ստորաբաժանումը հաշվետվությունների հիման վրա թարմացնում է ՊՄԳ ծրագրերի վերաբերյալ տվյալների բազան:

Հաշվետվությունների և մշտադիտարկման առանցքային կետերը ըստ պայմանագրի փուլերի Հավելված 4.1					
ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈՒԼ	ՄԻՆՉՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՓՈՒԼ	ԿԱՌՈՒՑՄԱՆ ՓՈՒԼ	ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ՓՈՒԼ	ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼ	ՓՈԽԱՆՑՄԱՆ ՓՈՒԼ
Նախապայմանների իրականացման փուլ • Սեփական կապիտալում ներդրումների հանձնառության ապացույց • Մասնավոր գործընկերոջ իրավաբանական անձի ստեղծում • Մրցութային փաստաթղթերով սահմանված կատարողականի ապահովում • Ֆինանսավորման համաձայնագրերը բանակցված և	**Մինչշինարարական փուլ** • Պայմանագիրը կնքված է • Հայտի ապահովման փակում • Վարկային պայմանագիրը կնքված է • Կատարողականի ապահովում՝ պայմանագրի ֆինանսական կայացմանն առնչվող մասի վերադարձ • ՄԻՆ ներկայացում	**Կառուցման փուլ** • Շինարարության կառավարման ձեռնարկի մշակում • Վերահսկող ինժեների որոշում բանկի կողմից • Վերահսկողության մեկնարկ • Ինժեների հաշվետվություններ • Պայմանագրի վերաբերյալ հաշվետվության ռեժիմի	**Շահագործման հանձնման փուլ** • Փորձարկման ընթացակարգերի սահմանում • Շահագործման հանձնման գծով անկախ կապալառուի ներգրավում • Հաստատման ընթացակարգերի և հաշվետվության պահանջների սահմանում • Վերջնական ընդունման	**Շահագործման փուլ** • Շահագործման կատարողական ապահովում • Կատարողական ստանդարտների և ԿՀՑ-ների հետ համապատասխանության մշտադիտարկում • Բնապահպանական պահանջների հետ համապատասխանության մշտադիտարկում • Ֆինանսական մոդելի	**Փոխանցման փուլ** • Ստուգումներ Փոխանցման պլանի շրջանակներում • Վերանորոգումներ, եթե անհրաժեշտ են • Փորձարկում՝ համոզվելու համար, որ փոխանցվող օբյեկտը գտնվում է աշխատանքային և լավ վիճակում • Ուսումնասիրություն և քայլերի ձեռնարկում՝

վերջնականացված են • Շինարարության և ՇևՊ ֆինանսական մոդելները մշակված են • ՇևՊ և ՆԳԿ պայմանագրերը կնքված են • Լիցենզիաներ • Հողի և սերվիտուտի ձեռքբերման մեկնարկ	• Իրավասու մարմնի կողմից ՄԻՆ հաստատում և • Անհրաժեշտ թույլտվությունների և իրավական պահանջների ապահովում (շինթույլտվություն, ՇՄԱԳ եզրակացություն) • Իրավասու մարմնի կողմից Մեկնարկի մասին ծանուցման թողարկում • Շինարարական աշխատանքների ուղենիշների որոշում • Կառավարող խմբի ստեղծում	սահմանում, այդ թվում՝ տեսակները և բովանդակությունը • Շինարարության ժամանակացույցի սահմանում, այդ թվում՝ ենթակապալառուների ուղենիշները • Գնումների մրցութային ստանդարտների սահմանում • Սարքավորումների գնումներ • Ենթակապալառուների և մատակարարների ներդրանքների կառավարում • Աշխատանքների ժամանակին	ընթացակարգի սահմանում • Կառավարող խմբի կողմից Ընդունման վկայագրի թողարկում՝ աշխատանքների ավարտից հետո մեկ տարվա ընթացքում • Շինարարության կատարողականի ապահովման վերադարձ	կանխատեսումների մշտադիտարկում՝ փաստացի կատարողականի համեմատությամբ • Պահանջարկի բավարարում ○ Փուլային զարգացում ○ Սպառողների ծածկույթ ○ Սակագնի կանխատեսումներ ○ Վերանորոգում և պահպանում ○ Սարքավորումների ուսումնասիրություն և վերանորոգում ○ Սարքավորումների փոխարինում	ապահովելու համար, որ օբյեկտի հետ կապված չլինեն իրավական խնդիրներ, չմարված պարտքեր, արգելանքներ և ծանրաբեռնվածություններ • Փաստաթղթերի, գույքային իրավունքների, ծրագրավորման կոդերի և սարքավորումների հանձնում • Փոխանցումից հետո մնացորդային արժեքի գնահատում երրորդ կողմի կողմից

		ավարտի ապահովում • Շինարարության կատարողական ի ապահովման պահպանում (շինարարության ուղենիշների կատարմանը զուգահեռ ապահովման մի մասը կարող է վերադարձվել) • Պայմանագրի ապահովումներ		○ Վարկային պարտավորությունների կատարում ○ Ներդրումների շահութաբերություն ○ Սեփական կապիտալի բաժանորդագրություններ ○ Շրջանառու կապիտալ ○ Զուտ գործառնական եկամուտ / պարտքի սպասարկում գործակից ○ Պարտք / սեփական կապիտալ գործակիցներ ○ Պարբերական ստուգումներ ○ Կառավարման կանոնավոր	• Օբյեկտի՝ ծրագրի տեխնիկական և համաձայնեցված համակարգային բնութագրերին, ՊՄԳ կատարողական ստանդարտներին և ծառայություններին համապատասխանության ապահովում: Ապահովման վավերականության ժամկետը պետք է կազմի առնվազն մեկ տարի: • Օբյեկտի ընդունում • Շահագործման կատարողական ապահովման ավարտ

				հաշվետվությունն երի ներկայացում	

Պայմանագրի՝ ուժի մեջ մտնելու նախապայմանների իրականացման փուլ

ՓՈՒԼ	ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐ	ՀԱՆՐԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԿԵՐ
ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈՒԼ	Մասնավոր գործընկերը պատասխանատու է պայմանագրի առևտրային և ֆինանսական կայացման համար: Մասնավոր գործընկերը պետք է նախապայմանների իրականացման փուլում ավարտին հասցնի առևտրային բոլոր բաղադրիչները, ի թիվս այլոց ստեղծելով ծրագրային ընկերությունը՝ որպես ՀՀ ում գրանցված իրավաբանական անձ, կնքելով բաժանորդագրության պայմանագրերը և տրամադրելով կատարողականի ապահովումը: Մասնավոր գործընկերը պետք է պարբերական հաշվետվություններ կազմի պայմանագրի ֆինանսական կայացման ուղղությամբ առաջընթացի վերաբերյալ՝ հաշվի առնելով ֆինանսական կայացման համաձայնեցված ժամանակացույցը: Մինչև նախապայմանների	Կառավարող խումբը պետք է կազմի կառավարության և մասնավոր գործընկերների առևտրային բոլոր պարտավորությունների ցանկ, ինչպես նաև ստանա տարբեր առևտրային բաղադրիչների մանրամասներ պարունակող հաշվետվություններ և պայմանագրերի պատճեններ՝ համաձայն պայմանագրի: Կառավարող խումբը պետք է պարբերական հաշվետվություններ ներկայացնի լիազոր մարմնին և մասնավոր գործընկերոջը՝ պայմանագրի առևտրային կայացման առաջընթացի վերաբերյալ: Ծրագրի ֆինանսավորումը հիմնարար նշանակություն ունի ծրագրի իրականացմանը հասնելու համար: Կառավարող խումբը պետք է

	իրականացման փուլի ավարտը ֆինանսական կայացման ոչ հավանական լինելու դեպքում, մասնավոր գործընկերը պետք է գործնականում հնարավորություն առաջանալուն պես այդ մասին տեղեկացնի կառավարող խմբին և հայցի ժամկետի երկարաձգում կամ դադարեցնի պայմանագիրը:	ուսումնասիրի ֆինանսավորման հեռանկարների վերաբերյալ կանոնավոր հաշվետվությունները և լիազոր մարմնին տեղեկատվություն և խորհրդատվություն տրամադրի ֆինանսական կայացման հետաձգման դեպքում աջակցություն ցուցաբերելու, պայմանագրի ժամկետը երկարաձգելու կամ այն դադարեցնելու ուղղությամբ հնարավոր գործողությունների վերաբերյալ:

Մինչշինարարական փուլ

1. Շինարարական աշխատանքների մեկնարկին նախորդում է նախագծման փուլը: Այս փուլում իրավասու մարմինը պետք է արդեն իսկ ձևավորած լինի Պայմանագրի կառավարող խումբ և առաջնորդի գործընթացը՝ Կատարողական նվազագույն ստանդարտներին և ցուցանիշներին նախագծի համապատասխանությունն ապահովելու նպատակով:
2. Ստորև ներկայացված են ՊՄԳ ծրագրի այն ուղղությունները, որոնք անհրաժեշտ է մշտադիտարկել սույն փուլում:

ՓՈՒԼ	ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐ	ՀԱՆՐԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԿԵՐ
ՄԱՆՐԱՄԱՍՆ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԾ (ՄԻՆ)	**Այս մասով առաջնային պատասխանատվություն կրում է մասնավոր գործընկերը:** ՄԻՆ-ը ներկայացվում է կառավարող խմբին՝ այդ թվում բոլոր գծագրերը և օժանդակ աղյուսակները:	Կառավարող խումբը պետք է ուսումնասիրի նախագիծը, հարցումներ և դիտողություններ կատարի վերջինիս վերաբերյալ՝ ապահովելու դրա համապատասխանությունը Կատարողական նվազագույն ստանդարտներին և ցուցանիշներին

	Մասնավոր գործընկերը պետք է ճշգրտի ՄԻՆ-ը կամ ներկայացնի նախագծի ճշգրտման իրագործելի կամ տեղին չլինելու վերաբերյալ հիմնավորում:	կամ օբյեկտի կարիքներին համապատասխանող նվազագույն տեխնիկական ստանդարտներին: Կառավարող խումբը մասնավոր գործընկերոջ հետ միասին վերանայում և ավարտին է հասցնում ՄԻՆ-ը՝ ձեռնարկելով բոլոր ողջամիտ միջոցները:
ՍԵՐՎԻՏՈՒՏԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ	Մասնավոր գործընկերը ստորագրված հավաստագրի միջոցով համաձայնում է, որ բոլոր հողամասերը հասանելի են ՊՄԳ պայմանագրին համապատասխան:	**Այս մասով առաջնային պատասխանատվություն կրում է կառավարությունը:** Ապահովվում է հողամասերի և շինարարական հրապարակի հասանելիությունը, քանի որ այն առանցքային նշանակություն ունի շինարարական աշխատանքների մեկնարկի համար:
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ	**Այս մասով առաջնային պատասխանատվություն կրում է մասնավոր գործընկերը:** Նախագծումը և ճարտարագիտությունը պետք է համապատասխանեն իրավասու մարմնի նախագծման ստանդարտ չափանիշներով և ՊՄԳ պայմանագրով սահմանված տեխնիկական ստանդարտներին: Մասնավոր գործընկերը պետք է վերանայի նախագծումը և ճարտարագիտությունը՝ ՊՄԳ պայմանագրով սահմանված նախագծման համաձայնեցված ստանդարտներին համապատասխանություն ապահովելու համար:	Կառավարող խումբը պատասխանատու է նշված նախագծման ստանդարտների մշտադիտարկման և նախագծման փուլում գծագրերի ուսումնասիրության վերաբերյալ լիազոր մարմնին մանրամասն հաշվետվությունների ներկայացման համար: Պայմանագրով սահմանված ստանդարտների հետ նախագծերի անհամապատասխանության դեպքում, կառավարող խումբը պետք է այդ մասին տեղեկացնի մասնավոր գործընկերոջը և պահանջի փոփոխությունների իրականացում նախագծում՝ պայմանագրին համապատասխան:

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՒՂԵՆԻՇԵՐ	**Այս մասով առաջնային պատասխանատվություն կրում է մասնավոր գործընկերը:** Մասնավոր գործընկերը պարբերական (սովորաբար՝ ամսական) հաշվետվություններ է ներկայացնում շինարարական աշխատանքների առաջընթացի, այդ թվում՝ հիմնական ուղենիշերի կատարման վերաբերյալ: Ուղենիշերն անհրաժեշտ են արդյունքների ապահովման, պայմանագրի պայմանների կատարման նպատակով ենթակապալառուներին խրախուսումներ առաջարկելու կամ առաջանցիկ տեմպերով կատարողականի դիմաց պարգևավճարներ տրամադրելու համար: Ուղենիշերի սահմանումն անհրաժեշտ է սահմանված պայմանների չկատարման դիմաց ենթակապալառուների համար ենթապայմանագրերում տուգանքների և պատժիչ միջոցների նախատեսման համար:	Կառավարող խումբը պետք է ուսումնասիրի բոլոր հաշվետվությունները և առաջընթացի վերաբերյալ կարծիք ներկայացնի հանրային գործընկերոջը: Ի հավելումն, կառավարող խումբը պետք է ներգրավված լինի այս գործընթացում՝ ապահովելու համար, որ սահմանված ուղենիշերը համապատասխանեն ՊՄԳ պայմանագրով սահմանված ներքին ուղենիշերին:
ՄՈԲԻԼԻԶԱՑԻԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ	**Այս մասով առաջնային պատասխանատվություն կրում է մասնավոր գործընկերը:** Նախագծի ավարտմանը և համաձայնեցմանը զուգահեռ, շինարարական գործառնությունների մոբիլիզացիան կապահովի ծրագրի ժամանակին	Մոբիլիզացիայի ժամանակին իրականացման անհրաժեշտությունից ելնելով՝ կիրառելիության դեպքում կառավարող խումբը պետք է ապահովի միջազգային հիմնական անձնակազմի համար

	ավարտի հնարավորությունը և ուղենիշերի կատարումը:	երկարաժամկետ վիզաների հասանելիության հնարավորությունը:
ԱՅԼ ԳՈՐԾՈՆՆԵՐ	**Այս մասով առաջնային պատասխանատվություն կրում է մասնավոր գործընկերը:** Այլ գործոնները ներառում են իրավական պահանջներ (ինչպիսին է՝ ՇՄԱԳ եզրակացությունը, եթե պահանջվում է), գոտիավորման մասով թույլտվություններ, տեղական ինքնակառավարման մարմիններին փաստաթղթերի ներկայացում և այլ գործոններ, որպեսզի ապահովվի նախագծի համապատասխանությունը պահանջվող ստանդարտներին, տեղական պահանջներին, ինչպես նաև ծրագրի հնարավորինս արագ մոբիլիզացիայի հնարավորությունը: Այս փուլում անհրաժեշտ աշխատանքի համար կարող են պահանջվել անկախ խորհրդատուի ծառայություններ՝ մինչշինարարական հնարավոր խնդիրների վերաբերյալ խորհրդատվություն տրամադրելու նպատակով:	Կառավարող խումբը պետք է ուսումնասիրի անկախ խորհրդատուի աշխատանքը և առաջարկություններն, ինչպես նաև ուսումնասիրի և հաստատի, որ շրջակա միջավայրի պաշտպանության հետ կապված բոլոր թույլտվությունները և վկայագրերը տրվել են օրենքին համապատասխան կերպով: Կառավարող խումբը իրավասու մարմնին հաշվետվություն է ներկայացնում համապատասխանության պահանջների մասով իր ուսումնասիրության և համաձայնու թյան վերաբերյալ:

3. Ծրագրի նախագծի ներկայացումից և իրականացման նպատակով հաստատումից հետո, մասնավոր գործընկերը պետք է թողարկի նախագծի հաստատման և պայմանագրում ներառման պահանջով վկայագիր: Կառավարող խմբի կողմից

առարկությունների բացակայության դեպքում, պայմանագիրը ներկայացվում է լիազոր մարմնին, որը թողարկում է Մեկնարկի մասին ծանուցում: Սա նշանավորում է շինարարության մոբիլիզացիան, իսկ ծրագիրը մտնում է հաջորդ փուլ:

Կառուցման փուլ

4. Ստորև ներկայացված են ՊՄԳ ծրագրի այն ուղղությունները, որոնք անհրաժեշտ է մշտադիտարկել սույն փուլում.

ՓՈՒԼ	ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐ	ՀԱՆՐԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԿԵՐ
ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՆԻՍՏԵՐ	Նախքան ցանկացած պլանավորված հանդիպման անցկացումը, մասնավոր գործընկերը պետք է պատրաստի շինարարության առաջընթացի վերաբերյալ հաշվետվություններ, որոնք պետք է ներառեն ուղենիշերի իրականացումը, վարչական խնդիրները, մոբիլիզացիայի առաջընթացը, շինարարության առաջընթացը, նյութերի մատակարարումը և ուշացումները, շինարարական աշխատանքների ավարտը և ուշացումները, ինչպես նաև շինարարական աշխատանքների կատարողականի հետ կապված ցանկացած այլ խնդիր:	**Այս մասով առաջնային պատասխանատվություն կրում է կառավարությունը:** Այս փուլում, կառավարող խումբը կսահմանի մասնավոր գործընկերոջ և վերջինիս շինարարական խմբերի հետ կանոնավոր նիստերի ժամկետները: Այս նիստերի նպատակն է՝ վերահսկել շինարարության հետ կապված մշտադիտարկման գործողությունները՝ ապահովելու համար, որ շինարարական ստանդարտները համապատասխանեն համաձայնեցված պահանջներին ու նախագծի ստանդարտներին և մուտքային տվյալներ, ինչպես նաև տվյալներ տրամադրել կառավարող խմբին և հանրային գործընկերոջը՝ կառուցման փուլից մինչև փոխանցման փուլն ընկած ժամանակահատվածում ՊՄԳ ծրագրի տեխնիկական կամ ֆիզիկական արդյունքների/հարցերի մշտադիտարկման

		համար: Կառուցման փուլի կանոնավոր նիստերը նախագահում է կառավարող խմբի անդամներից մեկը:
ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ	**Այս մասով առաջնային պատասխանատվություն կրում է մասնավոր գործընկերը:** Սովորաբար, նախագծային ստանդարտները սահմանվում են ՊՄԳ պայմանագրում: Մասնավոր գործընկերը կանոնավոր կերպով՝ առնվազն կանոնավոր նիստերի ժամանակ, հաշվետվություն է ներկայացնում նախագծային ստանդարտների պահպանման կամ դրանց մասով ցանկացած փոփոխության վերաբերյալ:	Կառավարող խումբը ուսումնասիրում է տվյալ նախագծային ստանդարտները պարունակող պայմանագիրը և տվյալներ է տրամադրում լիազոր մարմնին՝ մշտադիտարկման ենթակա նվազագույն ստանդարտների ցանկի կազմման ընթացքում:
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳՐԵՐ	**Այս մասով առաջնային պատասխանատվություն կրում է մասնավոր գործընկերը:** Մասնավոր գործընկերը պետք է կազմի շինարարության մասնագիր՝ ապահովելու համար, որ նվազագույն ստանդարտները և նախագծի ու նյութերի բնութագրերը պահպանվեն, ինչպես նաև շինարարության գործընթացում կառավարող խմբի ներդրումը համապատասխանի ՊՄԳ ծրագրի երկարաժամկետ կարիքներին: Մասնագիրը պետք է ժամանակ առ ժամանակ	Նախքան շինարարության մշտադիտարկումը, կառավարող խումբը պետք է մասնավոր գործընկերոջ հետ համատեղ աշխատի շինարարության մասնագրի ուղղությամբ՝ ապահովելու համար, որ նվազագույն ստանդարտները և նախագծի ու նյութերի բնութագրերը պահպանվեն, ինչպես նաև շինարարության գործընթացում կառավարող խմբի ներդրումը համապատասխանի ՊՄԳ ծրագրի երկարաժամկետ կարիքներին:

	փոփոխվի՝ հաշվի առնելով անհրաժեշտ դարձող բոլոր փոփոխությունները:	
ՎԵՐԱՀՍԿՈՂ ԻՆԺԵՆԵՐ	Մասնավոր գործընկերոջ հետ կնքված վարկային համաձայնագրի շրջանակներում, բանկը պահանջելու է վերահսկող ինժեների նշանակում իր կողմից՝ ապահովելու համար, որ շինարարության նպատակով բանկից միջոցների հայցումը (նաև կոչվում է «օգտագործում») համապատասխանի պայմանագրով սահմանված գումարին, որակին և քանակին, ինչպես նաև ՊՄԳ պայմանագրի մասնագրերին:	**Այս մասով առաջնային պատասխանատվություն կրում է կառավարությունը:** Վերահսկող ինժեների հետ հանդիպումներ է ունենում նաև կառավարող խումբը: Չնայած վերահսկող ինժեների պայմանագիրը կնքվում է բացառապես բանկի հետ, ինժեների և կառավարող խմբի շահերը համընկնում են, քանի որ ինժեները ևս զեկուցում է աշխատանքների համապատասխան գնահատված ծավալների իրականացման մասին՝ վարկային միջոցների օգտագործումը թույլատրելու նպատակով: Եթե վարկային միջոցների օգտագործումը գերազանցում է ծրագրի իրականացված համապատասխան տոկոսը, կարող են առաջանալ գերածախսեր, ինչպես նաև ճշգրտումների իրականացման անհրաժեշտություն՝ ծրագրի նախատեսված ընթացքն ապահովելու համար:

5. Այս փուլում պետք է մեկնարկի Պայմանագրի կառավարման ձեռնարկի մշակումը, որը ներառում է հաշվետվության պահանջների, այդ թվում ՝ տեսակների և բովանդակության, և տարբեր կողմերի պատասխանատվությունների և պարտավորությունների վերաբերյալ մանրամասներ: Այս փուլում կարևոր է պարտականությունների հստակեցումը՝ ապահովելու համար, որ

համապատասխան կողմերն արագ և արդյունավետ լուծեն փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերը: Տարբեր խնդիրներին արձագանքման համար պատասխանատուների սահմանումը կբարձրացնի հաղորդակցման գործընթացի արդյունավետությունը և շահագրգիռ քաղաքացիներին վստահություն կհաղորդի՝ վերջիններիս խնդիրների հասցեագրման մասով:

6. Ստորև ներկայացված են կառուցման փուլում մշտադիտարկման գործունեության հետ կապված որոշակի դիտարկումներ.

ՓՈՒԼ	ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐ	ՀԱՆՐԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԿԵՐ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ	**Այս մասով առաջնային պատասխանատվություն կրում է մասնավոր գործընկերը:** ՊՄԳ ծրագրի շինարարական աշխատանքների կառավարիչը մասնավոր գործընկերոջ համար պատրաստում է տարբեր հաշվետվություններ, որոնցում մանրամասն ներկայացվում է շինարարության պլանի իրականացումը:	Կառավարող խումբը մշտադիտարկում է շինարարական աշխատանքների իրականացումը՝ ուսումնասիրելով շինարարության գործընթացի և ներդրանքների ժամկետների վերաբերյալ հաշվետվությունները (առանց ծախսերի): Ավելին, կառավարող խումբը պետք է տեղեկացվի իր և պետական այլ մարմինների կողմից պահանջվող ներդրանքների մասին: Շինարարական աշխատանքների հետ կապված նիստերի շրջանակներում սահմանված հաշվետվության պահանջները ներառելու են շինարարական աշխատանքների կառավարչի կողմից կազմվող հաշվետվությունների տեսակների, ժամկետների և որակի վերաբերյալ մանրամասն տվյալներ:

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	**Այս մասով առաջնային պատասխանատվություն կրում է մասնավոր գործընկերը:** Ներգրավված բոլոր կողմերի հիմնական մտահոգություններից մեկը ծրագրի ժամանակին և սահմանված բյուջեին համապատասխան ավարտումն է: Շինարարական աշխատանքների կառավարիչների մեծամասնությունը վճարվում են հիմնվելով շինարարության ժամանակացույցի պահպանման իրենց կարողության վրա, իսկ մասնավոր գործընկերները քաջատեղյակ են փողի արժեքի՝ ժամանակի ընթացքում նվազման մասին: Կատարողական ստանդարտները ներառում են շինարարության, հողի մաքրման և նախապատրաստման, նոր սարքավորումների, շենքերի, շահագործման ենթակառուցվածքների և այլ առանցքային շինությունների վերաբերյալ ցուցանիշներ: Պահանջվում են ամսական հաշվետվություններ՝ տոկոսային արտահայտությամբ աշխատանքների իրականացման վերաբերյալ:	Նվազագույն ստանդարտների և կատարողական ցուցանիշների մշտադիտարկումը կարևորագույն նշանակություն ունեն շինարարական աշխատանքների կատարողականի արդյունավետ վերլուծության համար: Չնայած ծախսային մասը կառավարող խմբի պատասխանատվության շրջանակներում չէ, անհրաժեշտ է հասկանալ, որ գերածախսերը ազդեցություն են ունենում ծրագրի կատարողականի վրա, հետևաբար ծախսերի հետ կապված նկատառումները չպետք է անտեսվեն:
ԾԱԽՍԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	**Այս մասով առաջնային պատասխանատվություն կրում է մասնավոր գործընկերը:**	Կառավարող խումբը պետք է կանոնավոր կերպով մշտադիտարկի ծախսային տվյալների համապատասխանությունը աշխատանքների փաստացի իրականացված ծավալներին:

	Շինարարական աշխատանքների իրականացման վերաբերյալ տոկոսային արտահայտությամբ տեղեկատվությունից զատ, կառավարող խմբին պետք է պարբերաբար (սովորաբար՝ ամսական կտրվածքով) ներկայացվի տեղեկատվություն ծախսային ցուցանիշների վերաբերյալ՝ ծրագրի ֆինանսական վիճակի հնարավոր վատթարացումներն արձանագրելու նպատակով: Ծախսային տվյալները պետք է համեմատվեն աշխատանքների փաստացի իրականացված ծավալների հետ՝ որոշելու համար, թե արդյոք ծախսերը խստորեն համապատասխանում են աշխատանքների փաստացի իրականացված ծավալներին:	Նախազգուշացնող նշան է հանդիսանում ծախսերի՝ փաստացի իրականացված ծավալներից գերազանցումը, որի դեպքում պետք է հրավիրվի կանոնավոր կամ, անհրաժեշտության դեպքում, հատուկ նիստ՝ ծրագրի ավարտման համար պատշաճ ֆինանսավորման հասանելիության մասով քայլերի ձեռնարկումն ապահովելու նպատակով:
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ	**Այս մասով առաջնային պատասխանատվություն կրում է մասնավոր գործընկերը:** Տեխնիկական ստանդարտների ներդրման նպատակն է՝ ապահովել շինարարական աշխատանքների կառավարիչների կողմից փողի դիմաց առավելագույն արժեքի ստացումը: Սովորաբար մրցույթի շրջանակներում սահմանված սարքավորումների և շինարարական աշխատանքների պայմանագրեր ունեն ծրագրի ընկերության	Կառավարող խումբը պետք է ուսումնասիրի տեխնիկական ստանդարտները, որպեսզի ապահովի շինարարական աշխատանքների կառավարիչների կողմից փողի դիմաց առավելագույն արժեքի ստացումը: Պայմանագրում հատուկ սահմանված սարքավորումների և շինարարական աշխատանքների ներառման դեպքերում,

	բաժնետերերը, սակայն ծրագրի շրջանակներում կարող են ներգրավվել նաև այլ ընկերություններ կամ գնվել այլ ապրանքներ: Նշվածը կարող է մասնավոր գործընկերոջ կողմից ներկայացվել իր առաջարկում և պայմանագրում, սակայն մրցութային ստանդարտների միջոցով պետք է ապահովվի ողջ ծրագրի ընթացքում փողի դիմաց արժեքի ձեռքբերումը:	մրցութային գործընթացը պետք է մշտադիտարկվի կառավարող խմբի կողմից:
ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱԼՐՈՒՄ ԵՎ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ	**Այս մասով առաջնային պատասխանատվություն կրում է մասնավոր գործընկերը:** Արհեստավարժ ճարտարագետները կարող են ժամանակ առ ժամանակ պահանջվող ներդրում ունենալ ծրագրի նեղ մասնագիտական ոլորտներում; Սովորաբար, այդպիսի մասնագետներ ներգրավվում են, երբ ի հայտ են գալիս որոշ անսովոր կամ անկանխատեսելի իրավիճակներ: Նման իրավիճակների առաջացման դեպքում, մասնավոր գործընկերը պատասխանատու է հատուկ փորձագիտական կարողությունների անհրաժեշտության մասով կառավարող խմբին խորհրդատվություն տրամադրելու համար: Որևէ մասնագետի փոխարինման անհրաժեշտության դեպքում պետք է ներկայացվի ծանուցում, որում բերվում է	Կառավարող խումբը պետք է անմիջապես տեղեկացվի ցանկացած մասնագետի փոխարինման անհրաժեշտության մասին: Մասնագետի հեռացման մասով կառավարող խմբի կողմից հաստատում չի պահանջվում, սակայն ցանկացած փոխարինող մասնագետի ներգրավման դեպքում պետք է այդ մասին տեղեկացնել կառավարող խմբին, որն ունի խորհրդատվական կարծիք ներկայացնելու իրավունք այն դեպքերում, եթե առաջարկվող մասնագետի մասով Հայաստանի Հանրապետությունում նախկինում արձանագրվել է բացասական փորձ:

	փոխարինմանը հանգեցրած հանգամանքների նկարագրությունը:	
ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԳՆՈՒՄՆԵՐ	**Այս մասով առաջնային պատասխանատվություն կրում է մասնավոր գործընկերը:** Սովորաբար, գնումներն իրականացվում են առանց կառավարող խմբի ակտիվ ներգրավման՝ բացառությամբ այն դեպքերի, երբ սահմանված է տեղական մատակարարներից սարքավորումների գնման պահանջ: Եթե պահանջվում են արտերկրում արտադրված հատուկ սարքավորումներ, պայմանագրում կարող են նախատեսված լինել հատուկ պայմաններ՝ մաքսերի և տուրքերի մասով:	Կառավարող խումբը պետք է մշտադիտարկի արտերկրում արտադրված հատուկ սարքավորումներ հետ կապված հարցերը, ինչպես նաև նպաստի մաքսերից և տուրքերից պահանջվող ազատումների ստացման գծով աջակցության տրամադրմանը: Անհրաժեշտ է նշել, որ միջազգային գնումների դեպքում պահանջվում են արտարժույթով ծախսեր, իսկ արտարժույթի փոխարժեքի տատանումները կարող են էական բացասական ազդեցություն ունենալ ծախսերի վրա: Հնարավորության դեպքում, կառավարող խումբը պետք է խրախուսի արտարժույթի ֆորվարդային գնումներ՝ փոխարժեքի տատանումների նշված ազդեցությունը փոխհատուցելու նպատակով:
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐ	**Այս մասով առաջնային պատասխանատվություն կրում է մասնավոր գործընկերը:** Մասնավոր գործընկերը պետք է ներդնի կառավարության քաղաքականություններին և ուղեցույցերին համապատասխանող	Կառավարող խումբը պետք է ապահովի մասնավոր գործընկերոջ կողմից շրջակա միջավայրի պահպանության անհրաժեշտ միջոցառումների իրագործումը և

	բնապահպանական և սոցիալական երաշխիքներ (այդ թվում՝ շինարարության անվտանգության ստանդարտները): Բնապահպանական և սոցիալական ազդեցությունների մեղմումը բոլոր կողմերի առաջնային մտահոգություններից մեկն է:	վերաբնակեցման խնդիրների հասցեագրումը (առկայության դեպքում): Մասնավոր գործընկերոջ հետ սերտ համագործակցության միջոցով, կառավարող խումբը պետք է մշտադիտարկի ՊՄԳ ծրագրի բնապահպանական և վերաբնակեցման պլանների հետ համապատասխանությունը, ինչպես նաև արձանագրված խախտումների վերաբերյալ հաշվետվություններ ներկայացնի հանրային գործընկերոջը:
ԵՆԹԱԿԱՊԱԼԱՌՈՒՆԵՐԻ ՈՒՂԵՆԻՇԵՐ	**Այս մասով առաջնային պատասխանատվություն կրում է մասնավոր գործընկերը:** Մասնավոր գործընկերոջ շինարարական աշխատանքների կառավարիչը պատասխանատու է շինարարության գրաֆիկի մշակման համար, որը ներառում է ենթակապալառուների կատարողականը և վճարման ուղենիշերը:	Կառավարող խումբը պետք է հստակ պատկերացում կազմի ուղենիշերի, ինչպես նաև դրանց իրագործման համար ներգրավվող աշխատուժի և սարքավորումների մասին: Մշտադիտարկվելու են նաև անձնակազմի աշխատանքային գրաֆիկները և միջազգային մասնագետները՝ ենթակապալառուների ուղենիշերին համապատասխան:
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՐԱՖԻԿ	**Այս մասով առաջնային պատասխանատվություն կրում է մասնավոր գործընկերը:** Մասնավոր գործընկերոջ շինարարական աշխատանքների կառավարիչը մշակում է շինարարության գրաֆիկը և վերջինիս առանձին	Գրաֆիկի բոլոր տարրերի մասին տեղեկացվածությունը կարևորագույն նշանակություն ունի կառավարող խմբի համար: Վերջինս հաճախ տիրապետում է գրաֆիկի

	բաղադրիչներին կցում է մասնագիտացված կապալառուներ: Որոշ դեպքերում, շինարարական աշխատանքների կառավարիչը ներգրավում կամ փնտրում է տեղական ենթակապալառուների:	առանձին տարրերին համապատասխանող մասնագիտացված ենթակապալառուների մասին տեղեկատվության և կարող է առաջարկել տպավորիչ ձեռքբերումներ գրանցած ենթակապալառուների: Կառավարող խումբը պետք է շարունակի գործել որպես շինարարական աշխատանքների կառավարչի գործընկեր՝ աշխատանքների ժամանակին և ծախսերի տեսանկյունից արդյունավետ ավարտումն ապահովելու նպատակով: Դա վերջիվերջո կապահովի ծրագրի հաջողությունը և սպառողների համար օգուտները:
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ	**Այս մասով առաջնային պատասխանատվություն կրում է մասնավոր գործընկերը:** ՊՄԳ պայմանագրերի մեծամասնության շրջանակներում մասնավոր գործընկերոջից պահանջվում է կատարողական երաշխիքի տրամադրում՝ ապահովելու համար ծրագրի ավարտման և լիարժեք շահագործման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հասանելիությունն այն դեպքերում, երբ տեղի են ունենում ուշացումներ կամ գերածախսեր, բնական կամ այլ աղետներ: Կատարողական երաշխիքը կարող է լինել բանկում առկա դրամական միջոցների, մասնավոր	ՊՄԳ պայմանագրով պահանջվելու է ծանուցում՝ ապահովման որևէ մասի օգտագործման բոլոր դեպքերում, իսկ կառավարող խումբը պետք է երաշխիքների տրամադրման մասնագիտացված ընկերության կամ վարկատուների միջոցով շարունակաբար հավաստիանա, որ ապահովումն առկա է և ուժի մեջ է:

	գործընկերոջ վարկատուների կողմից տրված հետ չկանչվող ակրեդիտիվի կամ երաշխիքների տրամադրման մասնագիտացված ճանաչված ընկերության կողմից տրվող երաշխավորագրի տեսքով: Երաշխիքը կարող է մասամբ վերադարձվել շինարարության ուղենիշերի իրագործմանը զուգահեռ:	
ԱՅԼ ԳՈՐԾՈՆՆԵՐ	**Այս մասով առաջնային պատասխանատվություն կրում է մասնավոր գործընկերը:** Լրացուցիչ գործոնները կարող են ներառել գնված սարքավորումների համար արտադրողի երաշխիքների թողարկումը և փոխանցումը, շինարարության գրաֆիկների, ապահովագրության վկայագրերի ճշգրտումները և մասնավոր գործընկերոջը որպես հավելյալ ապահովագրվող կողմ սահմանելը՝ այն դեպքերի համար, երբ շինարարական աշխատանքների կառավարչի դեմ դատական հայցեր են ներկայացվում՝ կառավարությանը փոխհատուցում վճարելու պահանջով:	Կառավարող խումբը շարունակական կերպով մշտադիտարկում է լրացուցիչ գործոնները: Պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնել դատական հայցերի և կառավարության կողմից փոխհատուցման վերաբերյալ կանոնավոր հաշվետվությունների ապահովմանը: Ֆինանսների նախարարությանը և հանրային գործընկերոջը պայմանական պարտավորությունների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման համար պատասխանատու է կառավարող խումբը:

Շահագործման հանձնում

7. Շահագործման հանձնումը պլանավորման, փաստաթղթավորման, փորձարկման, ճշգրտման, հաստատման և ուսուցման գործընթացն է՝ օբյեկտը որպես ծրագրի պահանջներին համապատասխանող և լիարժեք գործող համակարգ ապահովելու նպատակով: Շահագործման հանձնման գործընթացի նպատակն է՝ իրականացվող ծրագրի որակի բարելավումը՝ նախագծման և կառուցման խմբերի ուշադրությունը կենտրոնացնելով ֆունկցիոնալ և արդյունավետ օբյեկտ ապահովելու ուղղությամբ: Որքան շուտ է շահագործման հանձնման աշխատանքների կապալառուն ներգրավվում ծրագրի գործընթացում, այնքան շատ են նշված կապալառուի՝ շտկումների մասով ազդեցություն ունենալու հնարավորությունները՝ առանց հետագայում ծախսերի ավելացման:

8. Կառուցման և շահագործման հանձնման գործընթացների համընկնումն անխուսափելի է, քանի որ կլինեն որոշ օբյեկտներ, որոնց շահագործումը կարող է մեկնարկել նախքան ամբողջ ծրագրի լիարժեք շահագործումը: Օբյեկտի շահագործման հանձնումը կարող է ծրագրավորվել շինարարական աշխատանքների վերջին փուլերում, որպեսզի դրանց մոտալուտ ավարտմանը զուգահեռ հնարավորություն ստեղծվի առավել արագ ստուգել և փորձարկել ամբողջ օբյեկտը:

9. Շահագործման հանձնումը ներառում է շահագործման հանձնման անկախ կապալառուի ներգրավում՝ օբյեկտը և վերջինիս՝ արտադրության ընդհանուր նպատակների և նախատեսված արդյունքների ապահովման կարողությունը ստուգելու նպատակով: Շահագործման հանձնման անկախ կապալառուն պետք է սերտիֆիկացված և գրանցված լինի սերտիֆիկացման ճանաչված խորհրդի կողմից: Օբյեկտի առանձին բաղադրիչների համար կարող է պահանջվել սերտիֆիկացում այլ գործակալությունների կողմից: Շահագործման հանձնման կապալառուի կարողությունների ըմբռնումը կառավարող խմբին հնարավորություն կտա որոշել, թե արդյոք օբյեկտը պատրաստ է օգտագործման, թե անհրաժեշտ է մասնավոր գործընկերոջն առաջարկել ներգրավել շահագործման հանձնման հավելյալ կապալառուների՝ ենթակառուցվածքների լրացուցիչ փորձարկումներ իրականացնելու նպատակով: Շահագործման հանձնման հիմնավոր ծրագիրը կարող է նվազեցնել երաշխիքային խնդիրներն ու չշտկված թերությունների ցանկը և ապահովել ծրագրի արդյունքների համապատասխանությունը ծրագիրը նախաձեռնողի և կառավարության նպատակներին:

10. Օբյեկտը շահագործման հանձնված համարվելուց հետո, կառավարող խումբը շինարարական աշխատանքների ավարտից (կառավարող խմբի կողմից Ավարտման վկայական թողարկելու պահից) հետո մեկ տարվա ընթացքում թողարկում է Ընդունման վկայական և վերադարձնում է շինարարության կատարողական ապահովումը

11. Շահագործման փուլը ներառում է հետևյալ գործողությունները և մշտադիտարկման հիմնական ուղղությունները.

ՓՈՒԼ	ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐ	ՀԱՆՐԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԿԵՐ
ՓՈՐՁԱՐԿՈՒՄ	**Այս մասով առաջնային պատասխանատվություն կրում է մասնավոր գործընկերը:** Շահագործման հանձնման կապալառուի կողմից կիրառվող փորձարկման ընթացակարգերը կհաստատեն, որ օբյեկտը պատրաստ է շահագործման և կարող է անվտանգ կերպով շահագործվել ի նպաստ սպառողների: Փորձարկումների արդյունքները պայմանագրին համապատասխան տրամադրվելու են մասնավոր գործընկերոջը և կառավարող խմբին:	Հանրային անվտանգության և օգտակար արդյունքների համար ընդհանուր պատասխանատվությունը կրում է կառավարությունը: Կառավարող խումբը պետք է ուսումնասիրի բոլոր փորձարկումները և արդյունքները՝ ապահովելու համար, որ շահագործման հանձնվող օբյեկտը համապատասխանի կամ գերազանցի պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված անվտանգության և օգտագործելիության բոլոր ստանդարտներին:
ՍՏՈՒԳՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ	**Այս մասով առաջնային պատասխանատվություն կրում է մասնավոր գործընկերը:** Ստուգման գործընթացի սահմանումը նպատակ ունի ապահովել, որ ընթացակարգն ընդգրկի օբյեկտի բոլոր բաղադրիչների փորձարկումը և համապատասխանի շահագործման հանձնման ստանդարտ ծրագրերին: Արդյունքները ստուգվում են այնպես, որ բավարարեն բոլոր կողմերին:	Կառավարող խումբը պետք է ուսումնասիրի շահագործման հանձնման գործընթացում իրականացված բոլոր փորձարկումները: Արդյունքները համեմատվում են պայմանագրի հետ և գնահատվում է դրանց համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը: Արձանագրված ցանկացած անհամապատասխանություն պետք է ներկայացվի մասնավոր և հանրային գործընկերներին:

ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	Մասնավոր գործընկերը պետք է ներդնի անհրաժեշտ բոլոր ջանքերը՝ շահագործման հանձնման փորձարկումների արդյունքները կառավարող խմբին ներկայացնելու և հաստատելու համար, որպեսզի վերջինս արագ տեմպով առաջ շարժվելու հնարավորություն ունենա:	**Այս մասով առաջնային պատասխանատվություն կրում է կառավարությունը:** Ստուգման արդյունքների հաշվետվությունը նպատակ ունի ապահովելու, որ կառավարող խումբը և պետական սերտիֆիկացնող մարմինները տեղեկացվեն և համաձայնություն տան օբյեկտի շահագործման հանձնմանը: Շահագործման հանձնման փորձարկումների արդյունքների ներկայացման և հաստատման ձախողումը կարող է անտեղի հետաձգել օբյեկտի շահագործումը:
ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ	**Այս մասով մասնակի պատասխանատվություն կրում է մասնավոր գործընկեր:** Պայմանագրով սահմանված վնասների փոխհատուցումը ներառվում է պայմանագրերի մեծամասնությունում, երբ փաստացի վնասների հաշվարկումը խնդրահարույց է: Եթե պայմանագրի կատարումը հետաձգվում է օբյեկտի շահագործման հանձնման անհնարինության պատճառով, պայմանագրի պայմանների խախտում թույլ տված կապալառուից հաճախ պահանջվում է փոխհատուցել որոշակի վնասներ՝ հասույթի կամ արտադրողականության կորստի մասով:	**Այս մասով մասնակի պատասխանատվություն կրում է կառավարությունը:** Ենթակապալառուների և մասնավոր գործընկերոջ նկատմամբ գործադրված՝ պայմանագրով սահմանված վնասների փոխհատուցման գումարները և ժամկետները պետք է մշտադիտարկվեն կառավարող խմբի կողմից՝ շահագործման հանձնման փուլի ողջ ընթացքում, իսկ մասնավոր գործընկերոջ կողմից իր պարտավորությունների չկատարման դեպքերը պետք է արձանագրվեն:

Սովորաբար, պայմանագրով սահմանված վնասների փոխհատուցումը կապալառուի նկատմամբ հաշվարկվում է օրական կտրվածքով, որպեսզի վերջինս ստիպված լինի ընդունել աշխատանքների ավարտման հրատապությունը: Ի հավելումն, ՊՄԳ պայմանագրով կապալառուի նկատմամբ սահմանվելու է վնասների փոխհատուցում՝ պահանջելով օբյեկտի շահագործման մեկնարկ որոշակի ամսաթվով: Նշված ամսաթվով շահագործումը չմեկնարկելու դեպքում ակտիվացվում է պայմանագրով սահմանված վնասների փոխհատուցման դրույթը:

Հավելված N 2
ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի
ապրիլի 11-ի N 1022-Ա հրամանի

«Հավելված N 5
ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի
փետրվարի 14-ի N 363-Ա հրամանի

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՊՄԳ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՇՈՒԿԱՅԻ ՀԵՏ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ

Բովանդակություն

Ուղեցույցի կիրառումը ՊՄԳ ծրագրի վերաբերյալ որոշման կայացման շրջանակներում.....44
Ռիսկերի կառավարման մասով առաջադրանքների կատարման պատասխանատվություն....45
Շուկայի հետ նախնական հաղորդակցման գործընթաց.....47
Շուկայի հետ նախնական հաղորդակցման թիրախների որոշում.....48
Շուկայի հետ նախնական հաղորդակցման պլանավորումը.....48
Շուկայի հետ նախնական հաղորդակցման ընթացքում ստուգվող խնդիրներ.....49
Գործարքի խորհրդատուների դերը.....50

1. Սույն ուղեցույցը տրամադրում է ուղղորդում՝ ՊՄԳ ծրագրի համար շուկայի հետ նախնական հաղորդակցման մոտեցումները սահմանելու մասով:

2. Շուկայի հետ նախնական հաղորդակցումը ՊՄԳ ծրագրի նախապատրաստման փուլում մասնավոր հատվածին ներգրավելու գործընթացն է: Շուկայի հետ նախնական հաղորդակցման միջոցով փորձ է կատարվում հասկանալու ծրագրին մասնակցելու՝ մասնավոր հատվածի հնարավոր հետաքրքրվածությունը, ինչպես նաև այն ֆինանսական և գործառնական խոչընդոտները, որոնք կարող են առաջանալ ընկերությունների համար՝ ենթակառուցվածքների և ծառայությունների ապահովման ընթացքում:

3. Շուկայի հետ նախնական հաղորդակցում իրականացնելու ընդհանուր մոտեցումը ներկայացված է Գծապատկեր 1-ում.

Գծապատկեր 1. Շուկայի հետ նախնական հաղորդակցման գործընթաց



Ուղեցույցի կիրառումը ՊՄԳ ծրագրի վերաբերյալ որոշման կայացման շրջանակներում

4. Շուկայի հետ նախնական հաղորդակցումը հանդիսանում է ՊՄԳ ծրագրում մասնավոր հատվածի շուկայի հետաքրքրվածության որոշման առանցքային տարրը:

5. Շուկայի հետ նախնական հաղորդակցումը հնարավորություն է տալիս մասնավոր և հանրային հատվածների միջև ունենալ դասակարգված քննարկումներ ՊՄԳ գործընթացի վաղ փուլերում: Արդյունքում, ոչ միայն ստուգվում է ծրագրի բաղադրիչների կենսունակությունը, այլ նաև՝ կարծիք է ստացվում այն մասին, թե ինչպե՞ս սահմանել ծրագրի տարբեր ասպեկտները, որպեսզի ապահովվի մասնավոր հատվածի մասնակցությունը և խթանվի մրցակցությունը:

6. Շուկայի հետ նախնական հաղորդակցումն իրականացվում է որպես ՊՄԳ ծրագրի մշակման առանցքային մաս: Շուկայի հետ նախնական հաղորդակցման տեղը ՊՄԳ ծրագրի նախապատրաստման գործողությունների շարքում ներկայացված է Գծապատկեր 2-ում.

Գծապատկեր 2. Շուկայի հետ նախնական հաղորդակցումն՝ ընդհանուր ՊՄԳ գործընթացում.



Ռիսկերի կառավարման մասով առաջադրանքների կատարման պատասխանատվություն

7. Սույն ուղեցույցում սահմանված առաջադրանքների կատարման պատասխանատվությունը ներկայացված է Աղյուսակ 1-ում.

Աղյուսակ 1. Շուկայի հետ նախնական հաղորդակցման պատասխանատվությունը

Թեմա	**Կառավարման առաջադրանք**	**Պատասխանատվություն**
Թեմա 1. Ե՞րբ իրականացնել շուկայի հետ նախնական հաղորդակցումը	Շուկայի հետ նախնական հաղորդակցման ռազմավարության և պլանի մշակման մաս	Հիմնական պատասխանատու՝ իրավասու մարմին Աջակցություն ՊՄԳ ստորաբաժանման կողմից

Թեմա	**Կառավարման առաջադրանք**	**Պատասխանատվություն**
Թեմա 2. Շուկայի հետ նախնական հաղորդակցման թիրախների որոշում	Շուկայի հետ նախնական հաղորդակցման ռազմավարության և պլանի մշակման մաս	Հիմնական պատասխանատու՝ իրավասու մարմին Աջակցություն ՊՄԳ ստորաբաժանման կողմից
Թեմա 3. Ինչպե՞ս իրականացնել շուկայի հետ նախնական հաղորդակցումը	Շուկայի հետ նախնական հաղորդակցման ռազմավարության և պլանի մշակման մաս Շուկայի հետ նախնական հաղորդակցման իրականացում	Հիմնական պատասխանատու՝ իրավասու մարմին Աջակցություն ՊՄԳ ստորաբաժանման կողմից
Թեմա 4. Շուկայի հետ նախնական հաղորդակցման ընթացքում ստուգվող խնդիրներ	Շուկայի հետ նախնական հաղորդակցման ռազմավարության և պլանի մշակման մաս Շուկայի հետ նախնական հաղորդակցման իրականացում	Հիմնական պատասխանատու՝ իրավասու մարմին Աջակցություն ՊՄԳ ստորաբաժանման կողմից
Թեմա 5. Գործարքի խորհրդատուների դերը	Շուկայի հետ նախնական հաղորդակցման իրականացման գործում գործարքի խորհրդատուներն ունեն առաջատար դերակատարություն	Հիմնական պատասխանատու՝ իրավասու մարմին Աջակցություն ՊՄԳ ստորաբաժանման կողմից

8. Հավելված 5.1-ում ներկայացված են շուկայի հետ նախնական հաղորդակցման պլանի մշակման և այնուհետև բուն շուկայի հետ նախնական հաղորդակցման իրականացման վերաբերյալ խորհուրդներ[1]:

Շուկայի հետ նախնական հաղորդակցման գործընթաց

9. Շուկայի հետ նախնական հաղորդակցման համար գոյություն ունի օպտիմալ ժամանակահատված: Եթե գնահատման ընթացքում շուկայի հետ նախնական հաղորդակցումն իրականացվում է չափազանց շուտ, ապա ծրագրի նկարագրությունը դեռևս չափազանց լայն է՝ ծավալի, հզորության և ծրագրի շրջանակի առումներով կառավարության մտադրությունների որևէ արդյունավետ նկարագրություն տրամադրելու համար: Շուկայի հետ նախնական հաղորդակցման չափազանց շուտ իրականացումը կառավարության կողմից անորոշության տպավորություն է ստեղծում: Ավելին, կարևոր հարցադրումները դեռևս հնարավոր չի լինի կատարել, քանի որ դրանք հատկորոշված չեն լինի:

10. Եթե շուկայի հետ նախնական հաղորդակցումն իրականացվում է այնպիսի փուլում, երբ ծրագրի նկարագիրը չափազանց մանրամասնեցված է, ապա մասնավոր հատվածի հետ արդյունավետ հետադարձ կապի հնարավորությունները սահմանափակվում են: Արդյունքում, մասնավոր հատվածը կորցնում է վստահությունը՝ գործընթացի վրա ազդելու իր կարողության նկատմամբ:

11. Հիմնական կանոնն այն է, որ ծրագիրը նկարագրող հիմնական հարցերի (տեխնիկական պահանջներ, ֆինանսական մոդել և պայմանագրի նախնական կառուցվածք) մշակումը պետք է սկսվի մինչև շուկայի հետ նախնական հաղորդակցման մեկնարկը, սակայն անհրաժեշտ է, որ դրանք դեռևս բավականաչափ ճկուն լինեն՝ ստացվող կարծիքները հաշվի առնելու համար:

12. Ծրագրի գնահատման փուլի միջնամասը բավարարում է նշված չափանիշներին: Գնահատման փուլի միջնամասը սովորաբար համընկնում է Քայլ 2-ում ներառված նախնական տեխնիկատնտեսական հիմնավորման նախագծի ավարտի հետ: Այն կրկին իրականացվելու է Քայլ 3-ում ներկայացված տեխնիկատնտեսական ուսումնասիրության շրջանակներում, որը ճշգրտվելու է շուկայի հետ նախնական հաղորդակցման արդյունքում դիտողությունների ստացումից հետո:

13. Շուկայի հետ նախնական հաղորդակցումը պետք է կրկնել Քայլ 5-ում հատկորոշված գնումների փուլում, հատկապես՝ երբ արդեն կառուցվածքի փոփոխություններն արդեն տեղի են ունեցել կամ երբ փոփոխված պայմանագիրն անհրաժեշտ է ստուգել շուկայի համապատասխան խաղացողների հետ: Շուկայի հետ նախնական հաղորդակցումը պետք է ներառվի գնահատման յուրաքանչյուր փուլում՝ հնարավոր հայտատուների հետ մշտական հետադարձ կապ ապահովելու նպատակով:

[1] Ֆարքուհարսոն և այլոք (2011թ.), «Ինչպես հաղորդակցվել զարգացող շուկաների մասնավոր հատվածի հետ՝ պետություն-մասնավոր գործընկերությունների շրջանակներում»

Շուկայի հետ նախնական հաղորդակցման թիրախների որոշում

14. Շուկայի հետ նախնական հաղորդակցման թիրախների որոշում նշանակում է ենթակառուցվածքների տեղական փորձառու մատակարարների հետազոտություն և որոշում՝ կառավարությանը համար շուկայի պայմանների, ծրագրի տեխնիկական հարցերի և ռիսկերի բաշխման վերաբերյալ փորձագիտական կարծիքների հավաքագրման հնարավորություն ապահովելու նպատակով:

15. Հնարավոր է, որ Հայաստանում չլինեն փորձառու մատակարարներ՝ հատկապես, եթե տվյալ ծրագիրն իր ոլորտում առաջինն է: Այդ դեպքում լավագույն պրակտիկա է հանդիսանում այնպիսի միջազգային մատակարարների որոնումը, որոնք կարող են նմանատիպ ծրագրի կամ ծառայության մասով միջազգային փորձառություն առաջարկել: Շուկայի նոր մասնակիցների կարծիքները ևս պետք է հաշվի առնվեն՝ հատկապես մրցակցային գնումների համար չկանխամտածված խոչընդոտները վերացնելու ուղիների որոնման նպատակով:

16. Անհրաժեշտ է խորհրդակցել նաև այն վարկատուների (հատկապես առևտրային բանկերի) հետ, որոնք կարող են ծրագրի համար ֆինանսավորում առաջարկել: Վերջիններս կարող են համապատասխան տեղեկատվություն տրամադրել առևտրային նպատակահարմարությանը նպաստող գործոնների, ինչպես նաև կոնկրետ ոլորտի համար շուկայի ընդհանուր պայմանների վերաբերյալ:

17. Շուկայի հետ նախնական հաղորդակցման ընթացքում կառավարությունը պետք է դիտարկի նաև միջազգային ֆինանսական հաստատությունների և բազմակողմ զարգացման բանկերի կարծիքների հարցումը՝ բազմազանեցնելով առաջարկվող ֆինանսական գրավչության վերաբերյալ տեսակետները:

Շուկայի հետ նախնական հաղորդակցման պլանավորումը

18. Բացի առաջնային թիրախներից (հնարավոր հայտատուներ հանդիսացող ոլորտային ընկերություններ), շուկայի հետ նախնական հաղորդակցումը կարող է ընդունել մի քանի ձևեր, ինչպիսին են՝ առանձին ընկերությունների հետ հանդիպումներ, ընդհանուր/ոլորտային հանդիպումներ կամ գրավոր հաղորդակցություն: Տեղեկատվությունը կարող է տրամադրվել պրեզենտացիայի, ծրագրի տեղեկատվական հուշագրի և, ավելի ուշ փուլում, կարծիքների ներկայացման նպատակով ՊՄԳ պայմանագրի կամ պայմանագրի պայմանների նախագծի հրապարակման միջոցով:

19. Լավ պրակտիկա է հանդիսանում ծրագրի պաշտոնական տեղեկատվական հուշագրի կազմումը՝ որպես շուկայի հետ նախնական հաղորդակցման առաջին քայլ: Այդ փաստաթղթում նկարագրվում են.

ա. Ծրագրի սահմանված մանրամասները և

բ. Հստակ նշվում են նախաձեռնության հետ կապված դեռևս անորոշ հարցերը:

20. Շուկայի հետ նախնական հաղորդակցման համար պետք է ընդունել շատ թափանցիկ մոտեցում և պետք է հստակ նշել ծրագրի հատկորոշված խոչընդոտները (թույլ կետերը

թաքցնելը միայն բազմապատկում է հետագա փուլերի խնդիրները, որտեղ կարող են ի հայտ գալ իրավական խնդիրներ՝ գնումների փուլի ավելի մոտ լինելու պատճառով):

21. Լավ պրակտիկա է հանդիսանում ծրագրի տեղեկատվական հուշագրում բոլոր կետերի ներառումը՝ շեշտը դնելով այն հարցերի վրա, որոնց վերաբերյալ կառավարությունն ակնկալում է ստանալ կարծիքներ, և ծրագրի բոլոր զգալիորեն անորոշ հարցերի ստուգումը:

22. Ծրագրի տեղեկատվական հուշագրի պատրաստումից հետո, մասնավոր հատվածի հետ հաղորդակցվելու համար գոյություն ունեն մի քանի հնարավոր մոտեցումներ: Նշված բոլոր մոտեցումների դեպքում կարևոր է խրախուսել ընկերությունների կողմից պաշտոնական մասնակցությունը՝ ծագող հարցերի վերաբերյալ դասակարգված կարծիքներ ստանալու նպատակով: Օրինակ.

ա. Ծրագրի տեղեկատվական հուշագիրը կարող է հրապարակվել առցանց և որպես համապատասխանող հատկորոշված բոլոր ընկերություններին կարող է ուղարկվել գրավոր դիտողություններ ներկայացնելու հրավեր:

բ. Կազմակերպվում է ծրագրի «բաց դռների օր» (որը կոչվում է նաև ոլորտային հանդիպումներ/ճեպազրույցներ), որի ընթացքում ընկերությունները (հնարավոր հայտատուներ, վարկատուներ և խորհրդատուներ) լսում են ծրագրի թիմի պատրաստած պրեզենտացիաները և կարծիքներ են հայտնում:

գ. Կարող են անցկացվել դեմ առ դեմ հանդիպումներ: Դրանց արդյունքները սովորաբար արդյունավետ են: Այս դեպքում, ծրագրի տեղեկատվական հուշագիրը և հարակից նյութերը պետք է հանդիսանան պրեզենտացիայի հիմնական ուղեցույցը: Հանդիպումների ընթացքում ներկայացվում են մանրամասն փաստաթղթեր, ինչպես նաև հետաքրքրված կողմերի համար կարող է պատրաստվել հարցաթերթ՝ ծրագրի կարևորագույն կետերի և մասնավոր հատվածի կողմից կարևորվող այլ կետերի վերաբերյալ քննարկումներ ծավալելու նպատակով:

23. Շուկայի հետ նախնական հաղորդակցման պլանում կսահմանվեն մոտեցումը և ընթացակարգերը՝ ընտրված մոտեցման հիմնավորման և իրականացման բյուջեի հետ միասին:

Շուկայի հետ նախնական հաղորդակցման ընթացքում ստուգվող խնդիրներ

24. Շուկայի հետ նախնական հաղորդակցման ընթացքում ստուգվող հիմնական խնդիրները պետք է ներառեն.

ա. Ծրագրի շրջանակը՝ ենթակառուցվածքների նախագծման և արդյունքների նախնական սահմանման առումով:

բ. Հատկորոշված հիմնական տեխնիկական ռիսկերը, որոնք կարող են ազդեցություն ունենալ հնարավոր հայտատուների՝ ենթակառուցվածքը և ծառայություններն ապահովելու կարողության վրա:

գ. Ակնկալվող կապիտալ ծախսերը և շահագործման և պահպանման ծախսերը:

դ. Նախատեսվող վճարման մեխանիզմը և հասույթի այլ սխեմաներ:

ե. Ծրագրի համար սահմանված՝ ռիսկերի ընդհանուր բաշխումը:

զ. Ֆինանսական ենթադրություններն, ինչպիսին են՝ պարտքը և ծախսերը:

է. Հարկային և հաշվապահական բնույթի ենթադրությունները:

ը. Գնումներից մինչև ծառայությունների մատուցման մեկնարկն առաջարկվող ժամանակացույցը և

թ. Պայմանագրի առաջարկվող կառուցվածքը (որը ներառում է ռիսկերի բաշխումը):

Գործարքի խորհրդատուների դերը

25. Գործարքի խորհրդատուները կարևորագույն դերակատարություն ունեն շուկայի հետ նախնական հաղորդակցման պլանի մշակման և իրականացման գործում: Նրանք օգնում են ապահովել շուկայի հետ նախնական հաղորդակցման մեկնարկը պատշաճ պահին, թիրախավորել կոնկրետ արտադրական ոլորտը և համայնքը՝ ներառյալ ֆինանսական հաստատությունները, մշակել պատասխանների ստացման ամենաարդյունավետ և ամենագործուն միջոցների ծրագիր և ապահովել համարժեք և թիրախավորված տվյալներ, որոնք անհրաժեշտ են շուկայի մասնակցին՝ լավ կառուցված, հարմարեցված ՊՄԳ առաջարկ պատրաստելու նպատակով կարծիք հայտնելու համար:

26. Անհրաժեշտ է ապահովել, որ Գործարքի խորհրդատվական պայմանագրում ներառվի Իրավասու մարմնի հետ միասին շուկայի հետ նախնական հաղորդակցման պլանի մշակման և իրականացման վերաբերյալ դրույթ:

Հավելված 5.1. Խորհուրդներ շուկայի հետ նախնական հաղորդակցման պլանի մշակման վերաբերյալ

1. ✓	Ապահովել, որ շուկայի հետ նախնական հաղորդակցման գործողությունը համահունչ լինի գնումների բոլոր համապատասխան կանոններին:
2. ✓	Մանրակրկիտ նախապատրաստվել շուկայի հետ ցանկացած հաղորդակցման՝ այդ գործողությունից առավելագույն արդյունք ստանալու համար, ինչպես նաև որպես պետական լիազոր մարմին լավագույնս ներկայանալ աշխարհին:
3. ✓	Դիտարկել շուկայի հետ նախնական հաղորդակցման գործողությունների իրականացումը ծրագրի վաղ փուլում և դիտարկել գնումների գնահատման գործընթացը նախքան գնումների պլանների մանրամասն ձևակերպումը:
4. ✓	Ժամանակ ներդնել տեղեկատվական փաստաթղթերի մշակման գործում: Հստակ ներկայացնել շուկայի հետ քննարկվելիք խնդիրները (օրինակ՝ տեղեկատվություն ռիսկերի առաջարկվող բաշխման, փոխհատուցման և կառուցվածքի մասին)՝ շուկայի կողմից արձագանքելու նյութ ապահովելու նպատակով: Հարցերը ձևակերպել և շարադրել զգուշորեն՝ խուսափելով ոչ պաշտոնական բառապաշարի օգտագործումից:
5. ✓	Հստակ սահմանել շուկայի հետ նախնական հաղորդակցման գործողություններին օժանդակելու նպատակով կազմակերպությունների ընտրության գործընթացը, օրինակ՝ հարցազրույցի անցկացման նպատակով կազմակերպությունների ընտրության կամ գրավոր կարծիքներ ներկայացնելու նպատակով կազմակերպություններ հրավիրելու գործընթացը:
6. ✓	Դիտարկել ընտրված կազմակերպությունների հետ «դեմ առ դեմ» ձևաչափի կիրառումը. հաշվի առնել, որ նշված կազմակերպությունները կարող են դժվարություններ ունենալ երկու կամ ավելի հնարավոր մրցակիցների հետ միաժամանակյա քննարկման գործընթացում, սակայն հավաստիացնել բոլոր կողմերին, որ նրանցից ոչ ոք չի առանձնացվում՝ հաջորդիվ որևէ գնումների գործընթացում հատուկ վերաբերմունքի արժանանալու նպատակով:
7. ✓	Պետական լիազոր մարմնի կողմում ընդգրկել մեկից ավելի անհատների: Հարցվողներին տրվող տեղեկատվության հարցում անհրաժեշտ է լինել հետևողական և ապահովել, որ հանդիպումներն արձանագրվեն: Օգտագործել շուկայի տեղեկատվությունը և կարծիքը, որը հանդիսանում է շուկայի հետ նախնական հաղորդակցման գործողությունների վերջնանպատակը
8. ×	Ժամանակ չծախսել վաճառքի պրեզենտացիաներ ստանալու վրա. շուկայի հետ նախնական հաղորդակցման իմաստը տվյալ պահի դրությամբ առկա առաջարկի վերաբերյալ շուկայի կարծիքը պարզելն է: Նմանապես,

	անհրաժեշտ է խուսափել ծրագիրը կոնկրետ առաջարկներին հարմարեցնելու գայթակղությունից:
9. ×	Ոչ մի կերպ չսահմանափակել շուկայի հետ նախնական հաղորդակցման շրջանակը. թիրախավորել շուկայի լայն ընտրանք, օրինակ՝ հրավիրելով և՛ օպերատորների/շինարարարության հետ կապված ընկերությունների և՛ ֆինանսավորողների, եթե տեղին է: Լինել շրջահայաց՝ կենտրոնանալով վերջնարդյունքների, այլ ոչ՝ դրանց հասնելու մեկ կոնկրետ միջոցի վրա:
10. ×	Չօգտագործել գնումներին առնչվող եզրույթներ, ինչպիսին է օրինակ «հայտատուները», հակառակ դեպքում տպավորություն կստեղծվի, որ շուկայի հետ նախնական հաղորդակցումը գնումների հետ կապված հնարավորություն է. այս փուլում միակ նպատակը տեղեկատվություն հավաքագրելն է, ինչպես նաև հարցվողներին խրախուսելը, որպեսզի նրանք անկաշկանդ կերպով տրամադրեն կարևորագույն կարծիքներ, այլ ոչ թե զգան, որ անհրաժեշտ է գործել իբրև հնարավոր հայտատուներ:

Հավելված N 3
ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի
ապրիլի 11-ի N 1022-Ա հրամանի

«Հավելված N 6
ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի
փետրվարի 14-ի N 363-Ա հրամանի

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՊՄԳ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՋ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ

Բովանդակություն

Ուղեցույցում կիրառվող եզրույթների սահմանում.....55

ՊՄԳ մասնավոր գործընկերոջ ընտրության ուղեցույց.....56

Գլուխ VIII. Ընդհանուր դրույթներ մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգի մասին.....56

Որակավորման չափանիշների որոշում.....57

Հայտերի գնահատման և հաղթող հայտի չափանիշների որոշման մեթոդ.....60

Գլուխ II. ՊՄԳ գործընթացի պատասխանատուները և Գլուխ X. Մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգի ընթացքի արձանագրումը և գրանցամատյանի վարման կարգը.....64

Գլուխ XII. Մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգի հայտարարությունը, որակավորման հարցումը և առաջարկի հարցումը.....65

Հայտի ապահովում.....70

Հաղթող հայտատուի հետ հստակեցումներ.....70

ՊՄԳ պայմանագրի առևտրային կայացում.....71

Ուղեցույցում կիրառվող եզրույթներ և հապավումներ

Որոշում	ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 28-ի թիվ 1183-Ն որոշում
Օրենք	«Պետություն-մասնավոր գործընկերության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք՝ ընդունված 2019 թվականի հունիսի 28-ին
Ձեռնարկ	ՊՄԳ պայմանագրի կառավարման ձեռնարկ
Մշտադիտարկող խումբ	Համաձայն Որոշմամբ տրված սահմանման
ԿՆՍՑ	Կատարողական նվազագույն ստանդարտներ և ցուցանիշներ, որոնց պետք է համապատասխանի ՊՄԳ ծրագիրը՝ շահագործման և սպասարկման աշխատանքներն իրականացնելիս
ՇևՍ	Շահագործում և սպասարկում
ՊՄԳ	Պետություն-մասնավոր գործընկերություն
ՈԱՀԸ	Մասնավոր գործընկերոջ ընտրության շրջանակներում որակի և արժեքի վրա հիմնված ընտրություն
ՓԴԱ	Փողի դիմաց արժեք՝ համաձայն Օրենքով տրված սահմանման
ԿՃՖ	Կենսունակության ճեղքվածքի ֆինանսավորում

ՊՄԳ մասնավոր գործընկերոջ ընտրության ուղեցույց

1. Սույն ուղեցույցում քննարկվող հարցերի շրջանակներում հավելյալ մանրամասներ են ներկայացվում Որոշման հետևյալ դրույթների վերաբերյալ.

ա. Գլուխ VIII. Ընդհանուր դրույթներ մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգի մասին

բ. Գլուխ IX. Մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգին մասնակցելու իրավունքը

գ. Գլուխ II. ՊՄԳ գործընթացի պատասխանատուները և Գլուխ X. Մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգի ընթացքի արձանագրումը և գրանցամատյանի վարման կարգը

դ. Գլուխ XI. Մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգի ձևերը

ե. Գլուխ XII. Մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգի հայտարարությունը, որակավորման հարցումը և առաջարկի հարցումը, ինչպես նաև Գլուխ XIII. Որակավորման հայտերը և Գլուխ XIV. Առաջարկի հարցման փուլի հայտերը

զ. Գլուխ XV. Մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգը չկայացած հայտարարելու կարգը:

2. Մասնավոր գործընկերոջ ընտրության փաստաթղթերը հիմնված են գնումների միջազգային ստանդարտ փաստաթղթերի և ՊՄԳ ծրագրի նախագիծը ձևավորող փաստաթղթերի վրա (այսինքն՝ տեխնիկատնտեսական ուսումնասիրություն, ռիսկերի բաշխում (սահմանվում է ռիսկերի մատրիցում), ծրագրի կառուցվածք, ֆինանսավորման սխեմաներ, կառուցման և շահագործման առանձնահատկություններ, ինչպես նաև ՊՄԳ պայմանագրի տևողություն):

Գլուխ VIII. Ընդհանուր դրույթներ մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգի մասին

3. Մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգի նպատակները հետևյալն են.

ա. Մասնավոր գործընկերոջ ընտրության սահուն ընթացակարգի իրականացում՝ խուսափելով խափանումներից և ժամանակացույցի փոփոխություններից:

բ. Փողի դիմաց արժեք (ՓԴԱ) և երկու կողմերի համար օգուտներ ապահովող ՊՄԳ պայմանագրի կնքում:

գ. Ծրագրի արագ և արդյունավետ հաստատման ապահովում:

դ. Մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգի արդյունավետ կառավարում՝ թափանցիկության ապահովմամբ:

ե. Ապահովել, որ ՊՄԳ պայմանագրի կատարման ընթացքում կառավարությունն ունենա բարձր աստիճանի որոշակիություն առ այն, որ հաղթող հայտատուն ժամանակացույցին համապատասխան ապահովելու է պահանջվող ֆինանսավորումը և վերջնարդյունքները:

զ. Մրցակցության արդյունավետ օգտագործում՝ պետության համար օպտիմալ վերջնարդյունքի և առավել փողի դիմաց արժեքի ապահովման նպատակով:

Որակավորման չափանիշների որոշում

4. Որակավորման գործընթացի նպատակն է ՊՄԳ պայմանագիր կնքող հայտատուի (ընկերության կամ կոնսորցիումի) համար կարողությունների նվազագույն ստանդարտների սահմանումը: Որակավորման չափանիշների սահմանումը նվազեցնում է ունակությունների և կարողությունների պակասի հետևանքով ծրագրի ձախողման ռիսկը: Սակայն, չափազանց խիստ չափանիշները կարող են սահմանափակել մրցակցությունը:

5. Որակավորման առավել բարձր պահանջները կարող են հանգեցնել մրցակցության կրճատման: Միաժամանակ, որակավորման մասով սահմանված չափազանց ցածր պահանջները կարող են վանել բարձր որակավորում ունեցող հայտատուներին, քանի որ վերջիններիս ընկալմամբ դա կհանգեցնի հաղթելու ցածր հավանականության: Յուրաքանչյուր ՊՄԳ ծրագրի նախագծի համար պետք է սահմանվեն դրան համաատասխանող որակավորումների մակարդակներ՝ մրցակցության ինտենսիվության և ստանդարտների հենանիշերի միջև պատշաճ հավասարակշռության հասնելու նպատակով՝ հաշվի առնելով նաև ծրագրի հատուկ կարիքները:

6. Յուրաքանչյուր ՊՄԳ ծրագրի նախագիծ, ամենայն հավանականությամբ, կունենա որոշ առանձնահատկություններ. և չափորոշիչները պետք է ձևափոխվեն՝ դրանք պատշաճ կերպով արտացոլելու համար: Չափանիշները պետք է սահմանվեն բավարար ճշգրտությամբ և խստությամբ, որպեսզի թույլ տան զտել միայն այն հայտատուներին, որոնք կարող են արժեք ավելացնել նախագծին:

7. Մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգն սկսվում է որակավորման հարցման փուլով, որի մասին հրապարակվում է հայտարարություն և որակավորման հարցում: Որպես այլընտրանքային ռազմավարություն կառավարութունը կարող է որոշում կայացնել մեկ փուլով բաց ընթացակարգ անցկացնելու վերաբերյալ: Երկու մոտեցումների տարբերությունը արտացոլված է Աղյուսակ 1-ում:

8. Մեկ փուլով բաց ընթացակարգի գործընթացում որակավորումները ներկայացվում են առաջարկի հետ միասին, հետևաբար ցանկացած հայտատու կարող է ներկայացնել առաջարկ: Սակայն, ծրագրի հայտերը կգնահատվեն միայն համապատասխան հայտատուի՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը ստուգելուց հետո (գնահատման «բավարար» կամ «ոչ բավարար» սկզբունքով):

Աղյուսակ 2 Մեկ փուլով և երկու փուլով ընթացակարգերի համեմատություն

Որակավորման ռազմավարություն	**Առավելություններ**	**Թերություններ**
Մեկ փուլով ընթացակարգ (որակավորման հայտերի և հայտերի միաժամանակյա ներկայացում) Այս մոտեցումը պետք է կիրառվի միայն այն դեպքերում, երբ ակնկալիքները շատ հստակ են ծրագիրը ֆինանսավորման և տեխնիկական տեսանկյուններից շատ բարդ չէ:	Թույլ է տալիս ունենալ մրցույթի առավել կարճ գործընթաց: Առավել հեշտ է կառավարել (միայն «համապատասխանում է»/ «չի համապատասխանում»): Առավել ցածր ծախսեր իրավասու մարմնի համար: Տեսականորեն թույլ է տալիս ունենալ առավել մեծ մրցակցություն:	· Առավել կարճ մրցութային ընթացակարգի հետևանքով ցածրորակ հայտերի ներկայացման առավել մեծ ռիսկ: · Մրցակցության մակարդակի (մրցակցող հայտատուների քանակի) հետ կապված անորոշությունը կարող է բարձր որակավորում ունեցող հայտատուներին հետ պահել հայտերի ներկայացումից: · Մրցակցության հետ կապված անորոշությունը կարող է չափազանց մեծ ճնշում առաջացնել գնագոյացման վրա (ստեղծելով անշրջահայաց հայտատուների ի հայտ գալու հնարավորություն) և վնաս հասցնել որակին: Հաղթող չճանաչված հայտատուների կողմից բողոքարկման ավելի բարձր ռիսկ՝ հայտատուների հավանական առավել

Որակավորման ռազմավարություն	Առավելություններ	Թերություններ
		մեծ ընդհանուր թվի հետևանքով:
Երկու փուլով ընթացակարգ Կիրառվում է ենթակառուցվածքային ծրագրերի մեծամասնության դեպքում, քանի որ դրանք ունեն բազմակի ասպեկտներ և պահանջում են լավ հմտություններ և ունակություններ՝ ծրագրերի և ռիսկերի սահմանման և կառավարման համար: Որքան ավելի բարդ և խոշոր է ծրագիրը, այնքան ավելի տեղին է հայտատուների որակավորման կիրառումը որպես առանձին փուլ:	· Առավել շատ ժամանակ է տալիս որակավորված հայտատուներին առաջարկի հարցումը պատրաստելու համար: · Որակավորումը ավելի բարդ չէ, քան մեկ փուլով բաց ընթացակարգի որակավորման գործընթացը: · Թույլ է տալիս նախքան առաջարկի հարցման հրապարակումն իրականացնել շուկայի հետաքրքրության իրական ստուգում: Դա նշանակում է, որ որակավորման հարցմանը չափազանց փոքր թվով արձագանքների պարագայում գնահատման հանձնաժողովը կարող է արձագանքել նախքան առաջարկի հարցում իրականացնելը: · Առավելագույնի է հասցնում մրցակցությունն այնպիսի հանգամանքներում, երբ առաջարկի հարցմանն արձագանքելու համար պահանջվում է էական ներդրում (հայտատուներն ավելի պատրաստակամ կլինեն կատարելու նշված ներդրումը, եթե անցել են որակավորման փուլը): · Գնահատող հանձնաժողովին թույլ է տալիս հստակեցնել, թե ովքեր են հեռանկարային հայտատուները: · Հաղթող չճանաչված հայտատուների կողմից բողոքարկման առավել ցածր ռիսկ:	· Կարող է առավել երկար գործընթաց լինել՝ հատկապես խոշոր, բարդ ծրագրերի դեպքում: · Մեծ թվով հայտատուների որակավորման դեպքում, որոշ հզոր հայտատուներ կարող են համարել, որ առկա է չափազանց մեծ մրցակցություն և չներկայացնել իրենց հայտերը առաջարկի ներկայացման փուլում: Գործընթացի տևողությունը և դրա հետ կապված ծախսերը պարունակում են փոքր թվով հայտերի ներկայացման ռիսկ: · մեծ թվով հայտատուների որակավորման դեպքում, կարող է չափազանց մեծ ճնշում առաջանալ գնագոյացման վրա (ստեղծելով անշրջահայաց հայտատուների ի հայտ

Որակավորման ռազմավարություն	Առավելություններ	Թերություններ
		գալու հնարավորություն), ինչպես նաև կարող է վնաս հասցվել որակին:

Հայտերի գնահատման և հաղթող հայտի չափանիշների որոշման մեթոդ

9. Ծրագրի պատրաստման փուլում (և ծրագրի տեխնիկատնտեսական ուսումնասիրության շրջանակներում) ուսումնասիրվում են հետևյալ հիմնարար հարցերը.

ա. Արդյո՞ք գինը հանդիսանալու է հաղթող հայտի միակ որոշիչ գործոնը (որակավորման չափանիշների բավարարելու պարագայում):

բ. Արդյո՞ք հաղթող հայտատուն որոշվելու է որակի և արժեքի վրա հիմնված ընտրության հիման վրա:

10. ՊՄԳ ծրագրի նախագծի պատրաստման փուլում նշված հարցերը խորությամբ ուսումնասիրվելու են և առաջարկություն է ներկայացվելու ամենապատշաճ տարբերակի վերաբերյալ: Առաջարկություն ներկայացնելիս, ծրագրի պատրաստման հետ կապված փաստաթղթերում անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ գործոնները.

ա. Եթե գինը հանդիսանում է հիմնական գործոնը, ապա որակի և արժեքի վրա հիմնված ընտրությունը գնահատման համար ճիշտ մոտեցում չէ:

բ. Եթե առկա են ծրագրի հետ կապված հատուկ ռիսկեր, որոնց մասով լուծում, այդ թվում նորարարյան հիման վրա, կարող է առաջարկել մասնավոր հատվածը, ապա որակի և արժեքի վրա հիմնված ընտրությունը գնահատման առավել լավ եղանակ է:

գ. Եթե նախագիծը/ճարտարապետությունը/նորարությունը հանդիսանում են ծրագրի հաջողության առանցքային գործոն, ապա որակի և արժեքի վրա հիմնված ընտրությունը առավել լավ եղանակ է՝ պատշաճ գնով բարձր ստանդարտներին համապատասխանող նախագիծ ապահովելու համար:

11. Արժեքի վրա հիմնված գնահատման եղանակ, որտեղ հաղթող հայտատուն որոշվում է ըստ առաջարկվող լավագույն գնի: Գնի սահմանումը կարող է արտացոլել մի շարք արժեվորումներ, այդ թվում՝

ա. Ամենաբարձր կոնցեսիոն վճար
բ. Ամենացածր հասանելիության վճար
գ. Ամենացածր ԿՃՖ
դ. Պետությանը հասույթի ամենամեծ մասի վճարում
ե. Ամենացածր սակագին կամ սակագնի ամենացածր ՀՆԱ:

12. Արժեքի վրա հիմնված ընտրությունը խորհուրդ է տրվում այն ՊՄԳ ծրագրերի նախագծերի դեպքում, որտեղ ծրագրի լուծումը և ծավալը հստակ սահմանված են պետության կողմից:

13. Մասնավոր գործընկերոջ ընտրության՝ միայն արժեքի վրա հիմնված լինելու դեպքում, տեխնիկական չափանիշներին համապատասխանությունը գնահատվում է «համապատասխանում է» կամ «չի համապատասխանում» սկզբունքով: Սա նշանակում է, որ գնահատվելու են միայն տեխնիկական չափանիշների նվազագույն պահանջներին համապատասխանող հայտերը, իսկ համապատասխանող հայտերի շարքում դիտարկվող միակ գործոնը լինելու է գինը:

14. Միայն արժեքի վրա հիմնված գնահատման մեթոդի հնարավոր ռիսկերի սահմանափակման ձևերից մեկը ոչ միայն ընդհանուր տեխնիկական չափանիշներին համապատասխանության գնահատման «համապատասխանում է» կամ «չի համապատասխանում» սկզբունքի սահմանումն է, այլ նաև առանցքային որակի/տեխնիկական ենթաչափանիշների համար սպեցիֆիկ և հարաբերական որակական բարձր գնահատականների ներառումը: Օրինակ, տեխնիկական չափանիշներին համապատասխանության համար կարող է պահանջվել 6 միավոր միջին կշռված գնահատական՝ հնարավոր 10 միավորից, սակայն տեխնիկական առաջարկի առանցքային տարրերի համար կարող է պահանջվել 7 կամ 8 կամ ավելի բարձր միավոր:

15. Որակի և արժեքի վրա հիմնված ընտրություն (ՈԱՀԸ): Մյուս մոտեցումը և՛ որակի և՛ արժեքի վրա հիմնված գնահատումն է:

Երբ առկա են և՛ տեխնիկական և՛ տնտեսական չափանիշներ, ակնկալվում է, որ դրանց յուրաքանչյուր դասի (տեխնիկական/որակական և տնտեսական) պատշաճ կշռումը կախված է լինելու ծրագրի տեսակից: Շատ նորարարական համարվող կամ բարդ ինժեներական խնդիրներ ներառող ծրագրերի պարագայում, առաջարկվող մոտեցումը, կիրառվող միջոցները և մեթոդները զգալիորեն ավելի կարևոր են լինելու, քան առավել ավանդական ծրագրերի դեպքում: Գիտելիքը և մոտեցումների որակը դառնում են առաջարկում պարտադիր ներկայացման և գնահատման հանձնաժողովի կողմից գնահատման ենթակա հարց:

Օրինակ, եթե ծրագրում ներառված է հողի բարելավում, առաջարկում անհրաժեշտ կլինի ներկայացնել հողի բարելավման պլանի մշակման, դրա կատարման և, միաժամանակ, էական բնապահպանական ռիսկերի կառավարման ժամանակ հասցեագրման ենթակա առանցքային գործոնները: Եթե տվյալ տեղամասում պոտենցիալ առկա է երկրաշարժ առաջացնող խզվածք, ապա ռիսկերի գնահատումը (չափը և հավանականությունը), լուծումների մշակումը և դրանց իրագործման համար տեխնիկական կարողությունների առկայությունը կգնահատվի գնից առավել առաջնահերթ կերպով: Սրանք երկու օրինակներ են առ այն, որ հայտատուները պետք է ցուցադրեն իրենց կարողություններն ու հմտությունները, ինչպես նաև այն, որ նրանց մոտեցումներն ու վերջնարդյունքները կարող

են բավարարել պետության կարիքները, այդ թվում՝ ծրագրի հիմնական ռիսկերի կառավարումը:

Այս հարցերը համապարփակ կերպով կսահմանվեն ծրագրի տեխնիկատնտեսական ուսումնասիրությունում:

16. Յուրաքանչյուր չափանիշի (նշված երկու խմբերի շրջանակներում) պետք է տրվի տեսակարար կշիռ, որն արտացոլում է տարբեր նպատակների հարաբերական կարևորությունը և տեղեկացնում է հայտատուներին պետության գերակայությունների մասին:

17. Հայտի համապատասխանությունն ընտրության չափանիշներին. առաջարկի հրավերում պետք է հստակորեն նշվի, թե առաջարկները ինչպես կարող են մերժվել կամ որակազրկվել՝ առաջարկի հրավերում հստակ սահմանված պահանջներին անհամապատասխանության դեպքում (համարվելով հայտի պահանջներին չհամապատասխանող): Որակի և արժեքի վրա հիմնված ընտրության դեպքում կարևորագույն նշանակություն ունի սահմանված նվազագույն գնահատականի ստացումը՝ 10 հնարավորից առնվազն 7 միավոր տեխնիկական գնահատականով:

18. APMG կազմակերպության մոտեցումը ներկայացված է ստորև բերված աղյուսակում, որպես օրինակ՝ ծրագրի համար գնահատման չափանիշների կշիռների և միավորների սահմանման մասով:

Աղյուսակ 3 Չափանիշների կշիռների օրինակ

				Կշիռներ
ԳԻՆ (50%)			• օրինակ՝ վճարման գումար	50
ՏԵԽՆԻԿ ԱԿԱՆ (50%)	20%	ԿԱՌՈՒՑՈՒՄ	• Ծրագրի նախագծի որակ և հուսալիություն	9.0
			• Կառուցման ժամկետների/օրացույցի հուսալիություն	5.5
			• Առաջարկվող ապահովման մեթոդների որակ (որակի հսկողություն/որակի ապահովում)	5.5
			• Այլ	

	11.5%	ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	• Շահագործման ընթացակարգերի և ձեռնարկների որակ	…
			• Միջոցների հատկացում	…
			• Սպասարկման կամ ՇևՍ Որակի կառավարման համակարգեր (ՈԿՀ) կամ պլաններ	…
			• Այլ	
	11.5%	ՍՊԱՍԱՐԿՈՒՄ	• …	…
			• …	…
			• …	…
	7.0%	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ, ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ, ԽՈՅԵԼԻ ԽՄԲԵՐ ԵՎ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՅԼ	• …	…
			• …	…
			• …	…
				Σ 100
ՀԻՄՆԱԿԱՆ ԴԱՍԵՐ	**ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԽՄԲԵՐ (ԿԱՄ ՀԻՄՆԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ)**	**ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**	➢ **ԵՆԹԱՉԱՓԱՆԻՇՆԵՐ**	➢ **ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ**

19. Որակական և/կամ տեխնիկական բնորոշ չափանիշները ներառում են.

    ա. Կառուցման հետ կապված հարցեր, որոնք կարող են ներառել այնպիսի չափանիշներ, ինչպիսին են՝ առաջարկվող ծրագրի նախագծի որակը և հուսալիությունը (սովորաբար՝ նախնական նախագծի ձևաչափով), գնահատված կառուցման ժամանակահատվածի հուսալիությունը, կառուցման վերահսկողության համար առաջարկվող որակի ապահովման մեթոդները,

բ. Գործառնական հարցեր, որոնք որոնք կարող են ներառել այնպիսի չափանիշներ, ինչպիսին են՝ շահագործման ընթացակարգերի և ձեռնարկների որակը և հուսալիությունը, միջոցների հատկացումը, սպասարկման կամ ՇևՍ որակի կառավարման համակարգերը կամ պլանները,

գ. Սպասարկման հարցեր, այդ թվում այնպիսի չափանիշներ, ինչպիսին են՝ սպասարկման պլանների և ծրագրերի որակը և հուսալիությունը, վերանորոգման/հիմնական սպասարկման ծրագրերը, հետ հանձնման առանձին պլանը,

դ. Բնապահպանական համապատասխանության և կայունության մասով գնահատման չափանիշներ ,

ե. Առողջության և անվտանգության պլանների գնահատման չափանիշներ,

զ. Այլ որակական չափանիշներ, ինչպիսին են՝ ազգային փոքրամասնությունների կամ բնակչության խոցելի խմբերի համար օգուտների հետ կապված չափանիշներ (սովորաբար սահմանվում են որպես նվազագույն ստանդարտ կամ պայման, օրինակ՝ ծրագրի կամ կոնսորցիումի կողմից աշխատանքով ապահովվող ազգային փոքրամասնության համայնքի անդամների թիվը), ֆինանսավորման հուսալիության հետ կապված չափանիշներ և այլն:

20. Չափանիշների ցանկը չպետք է լինի այնքան ընդարձակ, որ ավելորդ բարդություն առաջացնի գնահատման համար և հայտատուների համար դժվարացնի պետության հիմնարար նպատակների ուղղությամբ կենտրոնանալը: Չափանիշները պետք է կենտրոնանան ծրագրի առանցքային տարրի վրա. օրինակ, էսթետիկ նախագիծը կարող է հաճելի լինել, սակայն շահագործման և սպասարկման ծախսերը կարող են լինել անընդունելի բարձր: Նշված երկու կոնցեպտներին կտրվեն համապատասխան կշիռներ, որոնց միջոցով էլ կորոշվի հայտի գնահատականը:

Գլուխ II. ՊՄԳ գործընթացի պատասխանատուները և Գլուխ X. Մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգի ընթացքի արձանագրումը և գրանցամատյանի վարման կարգը:

21. Գնահատող հանձնաժողովի ստեղծում. Գնահատող հանձնաժողովը պետք է բավարար հմտություններ ունենա ներգրավված համապատասխան ոլորտներում և կարևոր է, որ հայտերի գնահատումն իրականացվի համապատասխան ոլորտի մասնագետների կողմից: Վերջիններս կարող են լինել պետական համակարգի աշխատողներ կամ արտաքին խորհրդատուներ:

22. Գնահատող հանձնաժողովի կազմը պետք է ներառի ՊՄԳ ծրագրի առարկա հանդիսացող ոլորտի փորձագետների: Օրինակ, ճանապարհաշինական ծրագրի դեպքում ներառվում են մի քանի ճարտարագետ-ճանապարհաշինարար մասնագետներ: Օդանավակայանի հետ կապված ծրագրի պարագայում ներառվում են ավիացիոն բիզնեսի մասնագետ, համապատասխան մասնագետ ճարտարագետներ և Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ICAO) մասնագետներ: Պահանջվելու է գնումների, ֆինանսական, ինչպես նաև սոցիալական ոլորտին առնչվող մասնագետներ,

ինչպիսին են շրջակա միջավայրի վրա ազդեցության և սոցիալական ու տնտեսական ազդեցությունների գծով մասնագետները:

23. Որպես գնահատող հանձնաժողովի կազմի ընտրության մասով ուղղորդում, ԵՄ օրենսդրությամբ սահմանվում է, որ համապատասխան մարմինը պետք է ստեղծի փորձագիտական կոմիտե, այդ թվում անկախ փորձագետների ներգրավմամբ, եթե սուբյեկտիվ/որակական գնահատումը կազմում է գնահատման չափանիշների ընդհանուր կշռի 50 տոկոսից ավելին: Այս մոտեցումը համարվում է լավագույն պրակտիկա:

24. Որակավորումների գնահատման նպատակով օգտագործվող ձեռնարկը կարևոր է՝ կիրառվելիք ենթակա գործընթացի և մեթոդների հետագա փաստաթղթավորման համար:

Գլուխ XII. Մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգի հայտարարությունը, որակավորման հարցումը և առաջարկի հարցումը

25. Ուղեցույցի սույն բաժինն անդրադառնում է գործընթացի բարձր որակի, թափանցիկության և համապատասխանության ապահովման ուղղությամբ իրականացվող գործողություններին և գործընթացի առանցքային հարցերին:

26. Մասնավոր գործընկերոջ ընտրության գործընթացը նախագծվելու է մի շարք առանցքային հատկանիշների շուրջ.

ա. **Որակավորումների մասով մոտեցումը.** Որակավորման հարցման (ՈՀ) թողարկման ժամկետները (առաջարկի հարցման (ԱՀ) հետ միասին կամ դրանից առաջ) և արդյո՞ք անհրաժեշտ է իրականացնել թեկնածուների նախնական ընտրություն (կարճ ցուցակ), թե կիրառել միայն «համապատասխանում է» / «չի համապատասխանում» չափանիշները,

բ. **Առաջարկի հարցման մասով մոտեցումը.** առաջարկի հարցման վերջնական տարբերակի և ՊՄԳ պայմանագրի նախագծի պատրաստման և թողարկման ժամկետները (երկխոսության և շփումների ժամանակաշրջանից հետո, թե՞ նախատեսելով միայն ոչ էական պարզաբանումներ՝ առանց շփումներ և երկխոսություն թույլատրելու),

գ. **Հայտերի ներկայացման և գնահատման մասով մոտեցումը.** արդյո՞ք թույլատրվում է հայտատուի կողմից մեկից ավելի առաջարկների ներկայացում: Բանակցություններն Օրենքով չեն թույլատրվում:

27. Մասնավոր գործընկերոջ ընտրության գործընթացը կարող է լինել մեկ փուլով կամ երկու փուլով գործընթաց: Նշված երկու տարբերակների դեպքում մոտեցումը հետևյալն է.

ա. Մեկ փուլով բաց մրցույթի գործընթացի դեպքում, գնահատող հանձնաժողովը նախքան առաջարկի բացումը պետք է գնահատի որակավորման հայտերը: Նշված երկու քայլերի հաջորդական բաժանումը թափանցիկության պաշտպանության լավ պրակտիկա է:

բ. Երկու փուլով բաց մրցույթի դեպքում (նախաորակավորում), որակավորումն իրականացվում է նախքան թեկնածուներին առաջարկի պատրաստման և ներկայացման հրավեր ուղարկելը:

28. Որակավորման հարցման և առաջարկի հարցման փուլերի համար պետք է առկա լինի Տվյալների սենյակ:

29. Տվյալների սենյակին հասանելիություն ստանալու հիմնական սկզբունքներն են. մեկ փուլով գործընթացի դեպքում, Տվյալների սենյակը հասանելի է բոլոր հայտատուներին: Երկու փուլով գործընթացի դեպքում, որակավորման հարցման փուլում հասանելի կլինի ծրագրի շրջանակի վերաբերյալ տեղեկատվությունը, իսկ առաջարկի հարցման փուլում ծրագրի բոլոր տվյալները հասանելի կլինեն «կարճ ցուցակում» ներառված հայտատուներին (ոչ մի այլ հասանելիություն չի տրամադրվելու): Տվյալների սենյակում առկա է լինելու հետևյալ տեղեկատվությունը.

ա. Որակավորման հարցման գործընթացի համար.

i. Որակավորման հարցումը

ii. Ծրագրի տեղեկատվական հուշագիրը

iii. Հայտատուների հարցերը և գնահատող հանձնաժողովի պատասխանները: Գնահատող հանձնաժողովի կողմից պատրաստված Մրցույթի տեղեկագրերը:

բ. Առաջարկի հարցման գործընթացի համար.

i. Նախնական գնահատումը (Նախնական տեխնիկատնտեսական հիմնավորում) և վերջինիս օժանդակ տեխնիկական գնահատումները և փաստաթղթերը

ii. Տեխնիկատնտեսական ուսումնասիրությունը և վերջինիս օժանդակ տեխնիկական գնահատումները և փաստաթղթերը

iii. Ծրագրի տեղեկատվական հուշագիրը

iv. Որակավորման հարցումը և առաջարկի հարցումը

v. ՊՄԳ պայմանագրի նախագիծը

vi. Ծրագրի նախագծի պատրաստման գործընթացում օգտագործված այլ հետազոտական և համեմատական նյութեր

vii. Հայտատուների կողմից ներկայացված հարցերը և խնդիրները: Գնահատող հանձնաժողովի կողմից պատրաստված ստացված հարցերի վերաբերյալ տեղեկագրերը: Իրավասու մարմնի և գնահատող հանձնաժողովի հետ հանդիպումների արձանագրությունները:

30. Որակավորման չափանիշները պետք է ներառեն.

ա. Հատուկ փորձառություն ՊՄԳ ոլորտում. հայտատուի կոնսորցիումի առանձին անդամները պետք է ունենան ոլորտային հատուկ փորձառություն, ենթակառուցվածքների/ծառայությունների ապահովման փորձ, ինչպես նաև կառուցման փորձ՝ ենթակառուցվածքների կառուցման կամ վերանորոգման դեպքում: Նշված փորձառության ապացույց են հանդիսանալու կոնկրետ ծրագրերի մասին տվյալները, որոնք ներառում են.

i. Համապատասխան ծրագրերի անվանումները և նպատակները
ii. Յուրաքանչյուր ծրագրի ամսաթիվը/ժամկետները
iii. Յուրաքանչյուր ծրագրի ոլորտը
iv. Յուրաքանչյուր ծրագրի կապիտալ արժեքը
v. Յուրաքանչյուր ծրագրի իրականացման երկիրը
vi. Յուրաքանչյուր ծրագրի հիմնական անձնակազմը
vii. Յուրաքանչյուր ծրագրի շրջանակներում հայտատուի կողմից իրականացված հիմնական գործունեությունը:

բ. Հայտատուի (հայտատուի յուրաքանչյուր անդամի) ֆինանսական կարողությունները, այդ թվում՝ հետևյալ տեղեկատվությունը.

i. Շուկայական կապիտալիզացիայի արժեքը. հայտատուի շուկայական կապիտալիզացիայի ընդհանուր արժեքը պետք է հավասար լինի կամ գերազանցի ծրագրի կապիտալ արժեքին
ii. Ամենաթարմ ֆինանսական հաշվետվությունները (հավաստված անկախ աուդիտորի կողմից)
iii. Հայտատուի ֆինանսավորման համաձայնությունների վերաբերյալ ապացույցներ վերջինիս ֆինանսավորող հաստատության կողմից
iv. Հայտատուն գտնվում է ֆինանսապես բարենպաստ վիճակում, չի գտնվում լուծարման կամ փակման գործընթացում կամ նրա նկատմամբ չի իրականացվում լուծարման կամ փակման որևէ գործողություն:

31. Որակավորումները պետք է գնահատվեն որակավորման հարցմամբ/առաջարկի հարցմամբ հայտարարված և նկարագրված չափանիշներին համապատասխան: Որակավորման հարցմամբ/առաջարկի հարցմամբ սահմանված չափանիշներից և մեթոդաբանությունից շեղումները խաթարում են անհրաժեշտ թափանցիկությունը և հավանական է, որ հանգեցնեն վերջնարդյունքի բողոքարկման:

32. Երկու փուլով գործընթացների դեպքում կարող է խնդիր առաջանալ, եթե նախաորակավորման և առաջարկների ներկայացման փուլերի միջև ընկած ժամանակահատվածում տեղի ունենա կոնսորցիումի կազմի փոփոխություն: Որակավորման հարցումը պետք է հստակեցնի, թե արդյո՞ք նշված փոփոխությունը թույլատրվում է, ինչպիսի՞

հանգամանքներում և ի՞նչ հնարավոր հետևանքներ է այն առաջացնելու: Կոնսորցիումի կազմի մասով որոշակի ճկունությունը կարող է ցանկալի լինել՝ նախաորակավորված կոնսորցիումին հավելյալ կազմակերպություններ ներգրավելու հնարավորություն տալու նպատակով, որոնք կարող են ամրապնդել կոնսորցիումի հայտը: Սակայն, կոնսորցիումին չպետք է թույլատրվի շարունակել մասնակցությունը գործընթացին, եթե կոնսորցիումի կազմը փոփոխվում է այնպես, որ վերջինիս զրկում է նախաորակավորման պահանջներին համապատասխանությունից: Գնահատող հանձնաժողովը պետք է նվազագույնի հասցնի կոնսորցիումի կազմի փոփոխությունների հավանականությունը:

33. Մրցութային գործընթաց. ՊՄԳ բարդությունների կառավարման մասով հատուկ նկատառումներն են.

ա. **Առաջարկների պատրաստման և ներկայացման ժամկետ.** սովորաբար ավելի երկար է, քան մասնավոր գործընկերոջ ավանդական ընտրության գործընթացի դեպքում: Ելնելով ՊՄԳ գործընթացների բարդություններից (այդ թվում՝ մասնավոր գործընկերոջ առաջ ծառացող բարդություններից), կարևոր է հայտատուներին տալ բավարար ժամանակ՝ պատշաճ ուսումնասիրություն, վերլուծություն և ծրագրի նախագծի ու ՊՄԳ պայմանագրի նախագծի գնահատում իրականացնելու համար:

բ. **Շփում շուկայի/հայտատուների հետ.** նախքան մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգի մեկնարկը պետք է իրականացնել նախնական շփման/հաղորդակցման գործընթաց: Շփումները պետք է տեղի ունենան նաև հայտերի ներկայացման գործընթացի ընթացքում՝ ծրագրի նախագծի մասին հայտատուներին առավել լավ տեղեկացնելու և առաջարկի հարցման ու ՊՄԳ պայմանագրի նախագծի ձևակերպումներում տեղ գտած հնարավոր անհամապատասխանությունների հստակեցման և ոչ միտումնավոր սխալների ուղղման նպատակով:

գ. **Գործընթացի մասով մարտահրավերների առաջացման ռիսկեր.** ելնելով պայմանագրի նախագծի և մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգի առավել մեծ բարդությունից, մարտահրավերների առաջացման ռիսկը ՊՄԳ-ների դեպքում համարվում է ավելի բարձր, քան մասնավոր գործընկերոջ ընտրության ավանդական ընթացակարգի դեպքում:

դ. **Գնահատման ժամկետ.** ՊՄԳ հայտերի գնահատումը ավելի բարդ է, քան ավանդական պայմանագրերի գնահատումը: ՊՄԳ դեպքում գնահատումը պահանջում է դրա տեխնիկական և ֆինանսական հատկանիշների, այդ թվում՝ տեխնիկական առաջարկի առանձնահատկությունների և առաջարկի ֆինանսական կայունության հետ դրա փոխազդեցության իմացություն:

34. Կարևոր է հայտատուներին բավարար ժամանակ տալ հիմնավոր և բարձրորակ առաջարկ ներկայացնելու համար: Հայտերի ներկայացման ժամանակահատված/ժամկետ

սահմանելիս, հայտատուներին պետք է բավարար ժամանակ տրամադրվի ծրագրի նախագծի և ՊՄԳ պայմանագրի նախագծի պատշաճ վերլուծություն և գնահատում իրականացնելու համար: Սովորաբար, բաց ընթացակարգի դեպքում հավասարակշիռ ժամկետ է համարվում 30-90 օր միջակայքը: Խոշոր և բարդ ծրագրերի դեպքում, բարձր որակի հայտերի ապահովման նպատակով կարող է պահանջվել 90-120 օր:

35. Մրցութային գործընթացի մեկնարկում. գնահատող հանձնաժողովը պետք է իրականացնի նախամեկնարկային ռազմավարություն՝ ապահովելու համար, որ հնարավոր հայտատուները տեղեկացված լինեն ծրագրի նախագծի, ինչպես նաև մրցութային գործընթացի պլանավորված ժամկետների մասին: Դա հայտատուներին հնարավորություն է տալիս պատրաստվել գործընթացի մեկնարկին և պատշաճ ռեսուրսներ տրամադրել հայտերի պատրաստմանը: Նախամեկնարկային գործընթացը ներառում է նախամրցութային տեղեկատվական հանդիպում/ներկայացում՝ նախքան հայտերի ներկայացման հրավերի թողարկումը, որի ընթացքում ներկայացվում է տեղեկատվություն հայտերի ներկայացման գործընթացի և ծրագրի վերաբերյալ:

36. Նախամեկնարկային գործընթացը ներառում է հետևյալ գործողությունների համակցություն.

ա. Տեղեկատվության հրապարակում համացանցում
բ. Գովազդում ազգային և միջազգային մամուլում և ոլորտային պարբերականներում (ՊՄԳ ստորաբաժանման կողմից անհրաժեշտ համարվելու դեպքում)
գ. Մամուլի հաղորդագրությունների թողարկում
դ. Դեսպանատներին և ոլորտային միություններին տեղեկատվության տրամադրում

37. Հայտերի ներկայացման փուլ. մեկնարկում է հայտերի ներկայացման հրավերի թողարկմամբ և ավարտվում է հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու պահին: Գնահատող հանձնաժողովը պատասխանատու է հայտերի ներկայացման փուլի բոլոր ասպեկտների համար:

38. Հայտերի ներկայացման փուլը ներառում է հայտատուների հետ հաղորդակցման մի շարք գործողություններ.

ա. Հայտերի հետ կապված պարզաբանումներ. հայտատուների հարցերին գնահատող հանձնաժողովի պատասխաններ, ինչպես նաև ծրագրի նախագծի և մրցութային փաստաթղթերի ցանկացած փոփոխություն: Յուրաքանչյուր հայտատու պետք է լիարժեք տեղեկացված լինի հարցերի, դրանց տրված պատասխանների և փաստաթղթերի փոփոխությունների մասին:
բ. Ծրագրի շրջանակ, ռիսկերի վերլուծություն և ՊՄԳ պայմանագրի նախագծի փոփոխության առաջարկություններ. այս խնդիրները կարող են քննարկվել հայտատուների հետ բաց կամ անհատական հանդիպումների միջոցով:

Անհատական հանդիպումներին պետք է ներկա գտնվի «բարեվարքության» գծով խորհրդատու: Ծրագրի փոփոխությունները ներկայացվում են հայտատուներին՝ առանց փոփոխությունների աղբյուրը բացահայտելու (առևտրային գաղտնիության մոտեցումն ապահովելու նպատակով):

գ. Հայտերի ներկայացման ժամկետի երկարաձգման հնարավորություն. հայտերի ներկայացման ժամկետի երկարաձգում սովորաբար տրամադրվում է միայն այն դեպքերում, երբ տեղի են ունեցել ծրագրի նախագծի շրջանակի փոփոխություններ, որոնք հայտատուներից կարող են պահանջել իրենց առաջարկի վերագնահատում: Ժամկետի երկարաձգման առանձին դիմումները սովորաբար չպետք է բավարարվեն, քանի որ դա կարող է դիտարկվել որպես տվյալ հայտատուին այլ հայտատուների նկատմամբ առավելության տրամադրում:

Հայտի ապահովում.

39. Ապահովման կիրառումը ՊՄԳ պայմանագրերի դեպքում ավելի բարդ է, քան մասնավոր գործընկերոջ ստանդարտ ընտրության դեպքում: ՊՄԳ ծրագրի մասնավոր գործընկերոջ ընտրության և պայմանագրի դեպքում, ապահովման միջոցները պահանջվում են հայտատուի/մասնավոր գործընկերոջ՝ ծրագրի մրցութային պահանջներին համապատասխանությունը և ՊՄԳ պայմանագրով սահմանված պայմանագրային պարտավորությունների կատարումն ապահովելու համար:

40. Հայտի ապահովումը պարտավորություններ է ստեղծում հայտատուի համար՝ հաղթող ճանաչվելու դեպքում իր հայտն ուժի մեջ պահելու մասով: Ապահովումը ներկայացվում է պետության բոլոր ծախսերի փոխհատուցման համար, եթե հաղթող ճանաչվելուց հետո հայտատուն հետ կանչի իր հայտը կամ առևտրային գործարքի կայացման փուլում չկատարի սահմանված պահանջները՝ ծախսեր առաջացնելով հանրային գործընկերոջ համար:

41. Հայտի ապահովումը կարող է լինել մի քանի ձևի: Այն կարող է լինել ֆինանսական հաստատության կողմից տրամադրված Պահուստային ակրեդիտիվի, ֆինանսական հաստատության կողմից թողարկված պարտատոմսի կամ ապահովագրական հաստատության կողմից թողարկված ապահովագրական պայմանագրի ձևով: Ապահովման ձևը, բովանդակությունը և ռիսկերի ծածկույթը սահմանվում են առաջարկի հարցմամբ: Ապահովման կոնկրետ ձևի ընտրության հիմնավոր փաստարկներ չկան: Սովորաբար, առաջարկի հարցմամբ սահմանվում է, որ նշված երեք ձևերից ցանկացածն ընդունելի է, սակայն ապահովումը պետք է թողարկված լինի միջազգային համբավ և գրանցում/հավաստագրում ունեցող հաստատության կողմից:

Հաղթող հայտատուի հետ հստակեցումներ

42. Մասնավոր գործընկերոջ ընտրության գործընթացի թափանցիկությունը և ամբողջականությունը պետք է չխախտվի: ՊՄԳ պայմանագրի նախագծի հստակեցումները թույլատրվում են, սակայն չեն կարող ներառել որևէ էական բանակցություններ կամ փոփոխություններ:

43. Արժեքի վրա հիմնված որոշումների դեպքում, հայտը պետք է լինի սահմանված պահանջներին համապատասխանող և չպետք է լինեն որևէ վերապահումներ կամ անհամապատասխանություններ: Այս դեպքում կարող են լինել որոշ քննարկումներ՝ հայտով ներկայացված առաջարկում տեղ գտած ձևակերպումների մասով, սակայն էական հարցերի շուրջ բանակցություններ չեն թույլատրվում:

44. Արժեքի և որակի վրա հիմնված ընտրության դեպքում հնարավոր է լինի հստակեցումների կարիք, սակայն դրանք սահմանափակվում են երկու էական գործոններով.

ա. Քննարկումների/հստակեցումների շրջանակներում չպետք է տեղի ունենա ռիսկի տեղաշարժ պետության ուղղությամբ: Այդպիսի որոշումը կարող է հիմք հանդիսանալ տվյալ հայտն ընտրելու վերաբերյալ որոշումը բողոքարկելու համար: *Հիմքը կլինի շատ պարզ. այլ հայտատուները ռիսկի տեղաշարժի վերաբերյալ առաջարկություն ներկայացնելու հնարավորություն չեն ունեցել:*

Հայտի հնարավոր առանցքային մաս հանդիսացող նախագիծը կարող է հստակեցվել, բայց ոչ՝ փոփոխվել: Ինչպես նշվել է սույն ուղեցույցի 14-րդ կետում, որակի և արժեքի վրա հիմնված ընտրության շրջանակներում գնահատման ժամանակ նախագծման բաղադրիչի համար կարող է բարձր միավոր սահմանվել: Նշված բաղադրիչի փոփոխությունը կասկածի տակ կդնի հայտի գնահատման ընթացքում տրված միավորները և, այդպիսով, հաղթող հայտատուի ընտրությունը:

45. Որակի և արժեքի վրա հիմնված ընտրության դեպքում, կարող են հստակեցվել հետևյալ հիմքերը.

ա. Հնարավոր է, որ հայտատուի առաջարկը բավականաչափ հստակ էր գնահատման նպատակների համար, սակայն գնահատման համար ոչ էական որոշ մանրամասներ կարող են ոչ հստակ կամ վատ ձևակերպված լինել և պետությունը կարող է ցանկություն հայտնել՝ ստանալու առավել հստակ և ճշգրիտ ձևակերպումներ:

բ. Թույլատրել ծրագրի սեփական կապիտալի ներդրում բաժնետիրական կապիտալի կամ սուբորդինացված պարտքի ձևով, սակայն ՊՄԳ պայմանագրի նախագիծը կարող է կազմված լինել այն ենթադրության հիման վրա, որ սեփական կապիտալը կազմված է միայն բաժնետիրական կապիտալից: Կարող են պահանջվել որոշ հստակեցումներ՝ ապահովելու համար, որ ՊՄԳ պայմանագրի նախագծի համապատասխան դրույթները պատշաճ կիրառելի լինեն սուբորդինացված պարտքի նկատմամբ:

ՊՄԳ պայմանագրի առևտրային կայացում

46. ՊՄԳ պայմանագրի առևտրային կայացումը կարող է տեղի ունենալ միայն այն ժամանակ, երբ հանրային գործընկերոջը ներկայացվեն և ՊՄԳ պայմանագրին կցվեն ստորև բերված փաստաթղթերը: Նշված փաստաթղթերը սահմանվում են առաջարկի հարցմամբ ու ՊՄԳ պայմանագրով և ներառում են.

ա. Ծրագիրն իրականացնող ծրագրի ընկերության ձևավորման համար կորպորատիվ փաստաթղթերի ամբողջական փաթեթը

բ. Ծրագրի ընկերության բաժնետիրական համաձայնագիրը:

գ. Առաջարկի հարցմամբ և ՊՄԳ պայմանագրով պահանջվող կատարողական ապահովումը:

դ. Պետությանը կատարվող բոլոր պահանջվող վճարումները. օրինակ, կոնցեսիոն վճար կամ դրա մի մասը կամ բացասական ԿՃՖ վճարում:

47. Այս պահից սկսած, ՊՄԳ պայմանագիրը գործում է և սկսում են գործել ՊՄԳ պայմանագրի ֆինանսական կայացման վերաբերյալ դրույթները:»:

Հավելված N 4
ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի
ապրիլի 11-ի N 1022-Ա հրամանի

«Հավելված N 7
ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի
փետրվարի 14-ի N 363-Ա հրամանի

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՊՄԳ ԾՐԱԳՐԻ՝ ՓԱՍՏԱՑԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ

Բովանդակություն

ՊՄԳ ծրագրի փաստացի գնահատման ուղեցույց 75
Գնահատման չափանիշներ 75
Համապատասխանություն 75
Արդյունավետություն 75
Գործունություն 76
Օգուտներ-ծախսեր արդյունավետություն 76
Կայունություն 76
Ազդեցություններ 76
Փողի դիմաց արժեք 77
Գնահատման իրականացում 77
Փորձագետներ և մասնագետներ 77
Ուսումնասիրվող նյութեր 78
Հարցազրույցներ 78
Վերջնարդյունքներ 79
Չափանիշների վերլուծություն 79
Փողի դիմաց արժեք (ՓդԱ) 79
Այլ վերջնարդյունքներ 79
Եզրակացություն 80

1. ՊՄԳ ծրագրի փաստացի գնահատման համար պատասխանատու է ՊՄԳ ստորաբաժանումը: Հանրային գործընկերը տեխնիկական աջակցություն է ցուցաբերում ՊՄԳ ստորաբաժանմանը: Անհրաժեշտության դեպքում ՊՄԳ ստորաբաժանումը կարող է փաստացի արդյունքների գնահատումն իրականացնելու նպատակով ներգրավել փորձագետների կամ խորհրդատուների:

2. Փաստացի արդյունքների գնահատումն իրականացվում է ՊՄԳ ծրագրի ավարտից հետո, իսկ հաշվետվությունը ներկայացվում է պայմանագրի՝ գործողության ժամկետը լրանալու կամ այլ պատճառով դադարեցվելուց հետո ոչ ուշ քան 180 օրվա ընթացքում:

3. Փաստացի արդյունքների գնահատումը նպատակ ունի ուսումնասիրել տվյալ ծրագրի միջոցով ստացված օգուտները, հանրային ծախսերի և ծրագիրը ՊՄԳ ձևաչափով իրականացնելու մասին քաղաքական որոշումների արդյունավետությունը, ինչպես նաև ապագա ծրագրերի համար գիտելիքներ ձեռք բերելու և կարողությունները զարգացնելու նպատակով:

4. Փաստացի արդյունքների գնահատման շրջանակներում անհրաժեշտ է իրականացնել գնահատման տարբեր չափանիշների մասով քննադատական գնահատում՝ հիմնված փաստացի արդյունքների գնահատման չափանիշների և ծախսեր-օգուտներ արդյունավետության վրա:

5. Փաստացի արդյունքների անկախ քննադատական գնահատման կիրառումն առավելագույն արդյունավետություն ունի այն դեպքում, երբ գնահատման նպատակը ոչ թե քննադատելն է, այլ՝ գիտելիքների և փորձի զարգացումն է: Գնահատումը կարող է ապահովել նաև սովորելու հնարավորություններ՝ ապագա ծրագրերի իրականացման և ընթացակարգերի բարեփոխման համար:

Գնահատման չափանիշներ

6. Բոլոր ծրագրերը գնահատվում են ստորև բերված չափանիշների հիման վրա, որոնցից յուրաքանչյուրին գնահատողը տալիս է միավորներ (1-5)՝ գնահատելով դրանց ապահովումը:

Համապատասխանություն

7. Ծրագիրը համապատասխանությունը նշանակում է, որ դրա միջոցով ապահովվող արդյունքը պահանջված է: Ծրագրի համապատասխանությունը չափվում է ազգային քաղաքականությունների և վերջնական սպառողների նախասիրությունների նկատմամբ: Գնահատման շրջանակներում կարևոր է ի հայտ բերել շահերի բախումները:

Արդյունավետություն

8. Այս չափանիշը վերաբերում է ծրագրի իրականացմանը և արդյունքներին՝ ծախսերի, ժամանակի և որակի տեսանկյունից, ինչպես նաև արտացոլում է, թե ՊՄԳ ծրագրի մասնավոր գործընկերը որքանով տնտեսապես արդյունավետ է փոխակերպել ներդրվող միջոցները արդյունքների: Սույն չափանիշի միջոցով գնահատվում են նաև ծախսերի, ժամանակի և որակի ուղղությամբ ՊՄԳ ծրագրի հանրային գործընկերոջ կողմից կատարված կապիտալի,

գործառնությունների, անձնակազմի և սարքավորումների մասով ներդրումները՝ համագործակցային աշխատանքի միջոցով ծրագրի օգուտները բարելավելու նպատակով: Արդյունավետությունն ապահովվում է այն դեպքում, երբ նախագծման և կառուցման աշխատանքներն իրականացվում են ժամանակին և սահմանված ժամանակացույցի համաձայն անցում է կատարվում ենթակառուցվածքների շահագործման հանձնմանը և շահագործմանը: Սա հստակ տեսանելի է այն դեպքերում, երբ աշխատանքների ավարտի հետաձգումն ազդում է սպառողների՝ նոր ենթակառուցվածքներից սահմանված ժամկետում օգտվելու հնարավորության վրա, այդպիսով նվազեցնելով ընդհանուր ՏՇՆԴ-ն:

Գործունություն

9. Այս չափանիշը վերաբերում է նրան, թե արդյո՞ք համաձայնեցված վերջնարդյունքը համապատասխանում է համայնքների վերջնական սպառողների կարիքներին՝ ըստ նախատեսվածի, կամ ինչու՞ չի համապատասխանում: Արդյո՞ք ծառայությունները մատուցվել են ըստ նախատեսվածի: Ինչպիսի՞ խոչընդոտներ են ի հայտ եկել և ինչպե՞ս են դրանք լուծվել: Որքանո՞վ լավ են կողմերը համագործակցել խոչընդոտները հասցեագրելու և լուծումներ գտնելու ուղղությամբ: Ի՞նչ դասեր են քաղվել ծրագրի իրականացումից:

Օգուտներ-ծախսեր արդյունատվություն

10. Արդյունատվությունը չափվում է կատարվող ծախսերի համեմատ վճարելու ընդհանուր պատրաստակամության տեսանկյունից կամ կատարվող ծախսերի համեմատ վերջնարդյունքի տեսանկյունից (ծախսարդյունավետություն): Օգուտներ-ծախսեր արդյունատվության որոշման շրջանակներում դիտարկվում է մատուցվող ծառայության հանդեպ սպառողների վերաբերմունքը, վերջիններիս վճարելու պատրաստակամությունը՝ հաշվի առնելով բոլոր այլընտրանքները:

Կայունություն

11. Ծրագիրը կայուն է, եթե հավանական է, որ վերջինիս կողմից ապահովվող օգուտները պահպանվեն ծրագրի գործողության ողջ ժամկետի ընթացքում և դրանից հետո: Դա սովորաբար պահանջում է, որ ծրագրի ընդհանուր ազդեցությունները (ֆինանսական, բնապահպանական և սոցիալական) երկարաժամկետ կտրվածքով ընդունելի լինեն վերջնական սպառողների համար: Առանցքային ցուցանիշներ են հանդիսանում ծառայության մատուցման շարունակականությունը, հետևողականությունը և գնագոյացման ողջամտությունը:

Ազդեցություններ

12. Այս չափանիշը ներառում է ծրագրի համաձայնեցված վերջնարդյունքից զատ բոլոր այլ հետևանքները (այսինքն՝ կողմնակի ազդեցություններ, շրջակա միջավայրի հետ կապված չնախատեսված հետևանքներ և այլ ազդեցություններ) տարբեր շահառուների համար, որոնք կարող են վերագրվել ծրագրին՝ որպես դրական կամ բացասական, կարճաժամկետ և երկարաժամկետ արդյունք:

Փողի դիմաց արժեք

13. Փողի դիմաց արժեքի որոշման նպատակով օգտագործվող գործիքը Հանրային հատվածի ծախսերի համեմատականն է և պետք է կիրառվի «Փողի դիմաց արժեքի և Հանրային հատվածի ծախսերի համեմատական (ՀՀԾՀ) գնահատման ուղեցույցը»: Գնահատման նպատակն է՝ պարզել, թե արդյոք ծրագրի արդյունքում ապահովված փողի դիմաց արժեքը հավասար է կամ գերազանցում է ծրագրի մեկնարկին ակնկալվող փողի դիմաց արժեքին:

Գնահատման իրականացում

14. Փաստացի արդյունքների գնահատումը լավագույնս կատարվում է ծրագրի իրականացման, կառավարման կամ մշտադիտարկման գործընթացներում չներգրավված անձանց կողմից: Գնահատումը պետք է իրենից ներկայացնի գնահատման չափանիշների, ինչպես նաև ծրագրի արդյունքում առաջացած օգուտների և թերությունների անկանխակալ վերլուծություն: Գնահատման շրջանակներում պետք է հասցեագրվեն ներքին անձնակազմի գնահատումները և ջանքեր գործադրվեն՝ փորձագետների և մասնագետների միջոցով ուսումնասիրելու գործողությունները, գործունեությունները, որոշումները, ընդլայնումները, արդյունքները և թերությունները: Ուսումնասիրվող նյութերը ներառելու են ծրագրին առնչվող բոլոր համապատասխան փաստաթղթերը: Գնահատողները պետք է հարցազրույցներ անցկացնեն ծրագրին և դրա ընթացիկ հարցերին տեղյակ բոլոր կողմերի հետ: Վերջապես, գնահատողները պետք է փաստաթղթավորեն կատարված աշխատանքը՝ ներկայացնելով իրենց կողմից կատարված բացահայտումների վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն և նկարագրական վերլուծություն:

15. Չնայած հնարավոր է, որ ՊՄԳ ստորաբաժանումն ունենա ՊՄԳ ծրագրի իրականացման ոլորտում տեխնիկական, բնապահպանական, սոցիալական, տնտեսական և ֆինանսական գիտելիքների տիրապետող անհրաժեշտ անձնակազմ, ՊՄԳ ստորաբաժանումը պետք է լրացնի ծրագրի համակողմանի ուսումնասիրության համար անհրաժեշտ բացերը՝ հանրային գործընկերոջ, ակադեմիական, հասարակական ոլորտի ներկայացուցիչների կամ անկախ խորհրդատուների օժանդակությամբ և աջակցությամբ:

Փորձագետներ և մասնագետներ

16. Փորձագետներ և մասնագետներ սովորաբար ներգրավվում են հավաքագրվող տվյալների և ծրագրի վերջնարդյունքների հանդեպ հանրային վերաբերմունքի մասնագիտական հարցումների հիման վրա ճշգրիտ տեղեկատվություն ապահովելու նպատակով: ՊՄԳ գծով մասնագետները գնահատում են ծրագրի համապատասխանությունն ու գործունեությունը և պետք է թիրախավորեն մասնավոր գործընկերոջ և նրա ներկայացուցիչների կատարողականի հանրային ընկալումները:

17. Նմանապես, ՊՄԳ ստորաբաժանումը պետք է մասնագետներ ներգրավի՝ փաստաթղթերի ուսումնասիրության և հարցումների միջոցով ազգային քաղաքականության նպատակների և տեղի վերջնական սպառողների նախասիրությունների հետ ծրագրի

համապատասխանությունը որոշելու նպատակով: Անկախ վերլուծաբանները տեղեկատվություն կտրամադրեն այն մասին, թե արդյո՞ք ծրագիրը բավարարել է վերջնական սպառողների կարիքները կամ ինչու՞ ոչ:

18. Փորձագետների անհրաժեշտությունը կարող է առաջանալ՝ ծրագրի կայունության և սոցիալական ազդեցությունների թեմաներով վերջնական սպառողների հետ քննարկումների միջոցով ծառայության մատուցման շարունակականությունը, հետևողականությունը և գնագոյացման ողջամտությունը որոշելու նպատակով: Նշված փորձագետները պետք է խորացված պատկերացում ապահովեն ծրագրի իրականացման ազդեցությունների և ցանկալի կամ անցանկալի կողմնակի ազդեցությունների վերաբերյալ:

Ուսումնասիրվող նյութեր

19. Նյութերը պետք է ներառեն հանրային գործընկերոջ և մասնավոր գործընկերոջ միջև կատարված բոլոր հաշվետվությունները, նամակագրությունը, ծանուցումները և այլ փաստաթղթերը: Կառավարող և մշտադիտարկման թիմերի կողմից պատրաստված հաշվետվությունները պետք է տեղեկատվություն տրամադրեն բոլոր վեճերի և կատարողական հիմնական ցուցանիշներին կամ կատարողական նվազագույն ստանդարտներին անհամապատասխանության դեպքերի վերաբերյալ: Նշված տեղեկատվության նպատակն է՝ արձանագրել այդպիսի բոլոր վեճերը կամ դժվարությունները և որոշել, թե արդյոք ներդրված ընթացակարգերը պատշաճ են եղել այդ խնդիրների և դրանց հետևանքների հասցեագրման համար:

20. Ծրագրի ընթացքում իրականացված հարցումները և քննարկումները հավելյալ տեղեկատվություն կտրամադրեն տեղական համայնքների և վերջնական սպառողների մտահոգությունների վերաբերյալ: Սա կարող է ծառայել որպես առանձին միջոց կամ օգտագործվել փաստացի արդյունքների շուրջ փորձագետների/մասնագետների կողմից անցկացվող հարցումների և քննարկումների հետ համատեղ՝ ընթացակարգերի փոփոխությունների մասով անհրաժեշտ առաջարկությունների սահմանման հարցում փաստացի արդյունքների գնահատմանն օժանդակելու նպատակով:

21. Կարևոր նշանակություն ունի ընդունման-հանձնման գործընթացի իրականացման ուսումնասիրությունը: Այն ներառում է գույքի/ակտիվների բոլոր ուսումնասիրությունների և գույքագրումների փաստաթղթերը, այդ ուսումնասիրությունների արդյունքների հասցեագրման համար ձեռնարկված վերականգնողական միջոցառումների ժամանակին իրականացումը և ընդունման-հանձնման ժամանակահատվածում բոլոր վերականգնողական միջոցառումների և տեղեկատվության հարցումների հասցեագրման մասով մասնավոր գործընկերոջ արձագանքների՝ ժամանակին և բովանդակային սպասումներին համապատասխանությունը:

Հարցազրույցներ

22. Փաստացի արդյունքների գնահատման թիմը պետք է հնարավորության սահմաններում հարցազրույցներ անցկացնի մասնավոր գործընկերոջ ներկայացուցիչների, կառավարող և մշտադիտարկման թիմերի, իրավասու մարմնի ներկայացուցիչների և լիազոր մարմնի հետ:

Հարցազրույցները նպատակ են ունենալու լսել նշված ներկայացուցիչների մտքերը ծրագրի մշակման, գնումների, մեկնարկի, իրականացման և հետ հանձնման վերաբերյալ՝ ընթացակարգերի փոփոխությունների, հաշվետվության բարելավման և կանոնավոր հանդիպումների վերաբերյալ բազմակողմանի խորը պատկերացում կազմելու նպատակով:

Վերջնարդյունքներ

Չափանիշների վերլուծություն

23. Հաշվետվությունը պետք է անդրադառնա ծրագրի կողմից վերը սահմանված գնահատման 6 չափանիշներով նկարագրված խնդիրների և նպատակների իրագործման գնահատականին՝ կիրառելով 1-ից մինչև 5 սանդղակը: Չափանիշներից յուրաքանչյուրին տրվում է առանձին միավոր, իսկ բոլոր չափանիշներին տրված միավորների հանրագումարը պետք է կազմի 6-ից մինչև 30 միավոր: Եթե նշված հանրագումարը գերազանցում է 21-ն, ապա ծրագիրն ընդհանուր առմամբ իրագործել է իր նպատակները և խնդիրները: 20 և ավելի ցածր միավորը ցույց է տալիս, որ ծրագիրը չի իրագործել սահմանված նպատակները, ինչի պարագայում պահանջվում է ներկայացնել դրա պատճառները և ապագայում ձախողումից խուսափելու ուղղությամբ առաջարկությունները:

24. Եթե ծրագրին տրված միավորների հանրագումարը հավասար է կամ գերազանցում է 26-ն, ապա ծրագիրը համարվում է խիստ հաջողված: Փաստացի արդյունքների գնահատման թիմը պետք է ձևավորի կոնսենսուս առ այն, որ գնահատման արդյունքները հիմնված են փաստերի վրա և հստակ ներկայացնի, թե ինչու են չափանիշներից յուրաքանչյուրին տրվել համապատասխան միավորները: Գնահատումը չպետք է իրականացվի համատեքստից դուրս և պետք է կատարվի սկզբնական, ինչպես նաև փոփոխվող նպատակների և ակնկալիքների համեմատ:

Փողի դիմաց արժեք (ՓԴԱ)

25. Մանրակրկիտ վերլուծության միջոցով որոշվում է, թե արդյոք ձեռք է բերվել ՓԴԱ: 4 կամ 5 միավոր կարող է տրվել միայն այն դեպքերում, երբ ՓԴԱ-ն գերազանցում է սկզբնական վերլուծությամբ ակնկալվող մեծությունը: Ակնկալվող մեծությանը հավասար ՓԴԱ դեպքում տրվում է 3 միավոր: Բացասական ՓԴԱ պարագայում տրվում է 1, իսկ դրական, բայց ակնկալվող մեծությունից փոքր ՓԴԱ դեպքում՝ 2 միավոր: ՓԴԱ ակնկալվող մեծության 1 տոկոսից ավելի, բայց 5 տոկոսից պակաս գերազանցման դեպքում տրվում է 4 միավոր, իսկ 5 և ավելի տոկոս գերազանցման դեպքում՝ 5 միավոր:

Այլ վերջնարդյունքներ

26. Փաստացի արդյունքների գնահատման թիմի հաշվետվությունը պետք է սահմանի, թե որոնք են ծրագրի արդյունքում ձեռքբերված ամենաշահավետ վերջնարդյունքները, ինչպիսին են դրանք և ինչու է գնահատման թիմը կարծում, որ նշված վերջնարդյունքներն ամենաշահավետն են: Հաշվետվությամբ պետք է ներկայացվեն նշված օգուտների վերաբերյալ մանրամասներ ներկայացնող ապացույցներ, այդ թվում՝ հարցումների և քննարկումների ընթացքում տրված գնահատականներ:

27. Հաշվետվությունը պետք է սահմանի, թե որոնք են ծրագրի արդյունքում ձեռքբերված ամենաքիչ շահավետություն ունեցող վերջնարդյունքները, ինչպիսին են դրանք և ինչու է գնահատման թիմը կարծում, որ նշված վերջնարդյունքներն ամենաքիչ շահավետն են: Հաշվետվությամբ պետք է ներկայացվեն մանրամասն ապացույցներ առ այն, թե ինչպես է գնահատման թիմը հանգել տվյալ եզրակացությանը:

Եզրակացություն

28. Փաստացի արդյունքների գնահատման հաշվետվությունը պետք է հստակ և հակիրճ կերպով ամփոփի վերը նշված վերջնարդյունքները: Ամփոփման մեջ նշվում են տրված միավորները և այն, թե արդյոք ծրագրի նպատակներն ու խնդիրները կատարվել են, թե ոչ: Վերջիններիս չկատարման դեպքում նշվում են դրա պատճառները և ապագայի համար կատարվելիք քայլերը:

29. Եզրակացության կարևոր մաս են կազմում քաղված դասերը: Փաստացի արդյունքների գնահատման թիմը մանրամասն ներկայացնում է նշված վերջնարդյունքներից քաղված դասերը՝ հետագա ծրագրերի կառավարման և մշտադիտարկման նպատակով, որը պետք է փոխանցվի Կառավարող և մշտադիտարկման թիմերին: Տվյալ բաժնում պետք է նաև հասցեագրվի այն հարցը, թե արդյոք նախապատրաստական փուլում սահմանված ՊՄԳ ծրագրի կառուցվածքը մշակված էր պատշաճ կերպով:

30. Քաղված դասերը ծրագրի իրականացման գործընթացում ստացած գիտելիքն է: ՊՄԳ ստորաբաժանումը իրականացնելու է վերլուծություններ և հարցազրույցներ է անցկացնելու ծրագրի ղեկավարների, կառավարող և մշտադիտարկման թիմի, լիազոր մարմնի և ծրագրի այլ մասնակիցների հետ՝ քաղված դասերին նվիրված հանդիպումների շրջանակներում, ինչպես նաև կազմելու է հաշվետվությունների նախագծեր և որոշումներ է կայացնելու այն մասին, թե ինչպես օգտագործել ստացված գիտելիքները: Ապագա ծրագրերի մշակման առաջարկներում և տեխնիկատնտեսական ուսումնասիրության թիմի անդամների հետ քաղված դասերով կիսվելը կկանխի իրավասու մարմինների և այլ պետական մարմինների կողմից նման սխալների կրկնությունը: Դա թույլ կտա ծրագրերի պատրաստման գործընթացի յուրաքանչյուր մասնակցին օգտվել առկա լավագույն փորձից: Նորարարական մոտեցումները և աշխատանքային լավ պրակտիկաները հարկավոր է կիսել այլոց հետ:

31. Հիմնվելով գնահատման վրա, փաստացի արդյունքների գնահատման թիմը պետք է պատրաստի առաջարկությունների ցանկ: Առաջարկությունները պետք է ուղղված լինեն և՛ ապագա ՊՄԳ ծրագրերի տնտեսական մասի, արդյունավետության ու գործունության բարելավմանը և՛ ՊՄԳ քաղաքականության, ՊՄԳ ընթացակարգերի և կազմակերպման կատարելագործմանը՝ ծրագրերի կատարողականի առավել լավ կառավարման և մշտադիտարկման նպատակով: